

ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻ 1

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ*

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Բարևներ	Ողջույնի խոսք	Բարևներ	Բարևներ	Հասցեստեր
1:1-2	1:1-2	1:1ա 1:1բ 1:2	1:1ա 1:1բ 1:2	1:1-2
Պողոսի աղոթքը Փիլիպպեցիների համար	Շնորհակալություն և աղոթք	Գոհություն	Պողոսի աղոթքը իր ընթերցողների համար	Գոհություն և աղոթք
1:3-11	1:3-11	1:3-8 1:9-11	1:3-8 1:9-11	1:3-11
Ինձ համար ապ- րելը Քրիստոս է	Քարոզվում է Քրիստոսը	Պողոսի ներկա իրավիճակները	Ապրելը Քրիստոս է	Պողոսի սեփական իրավիճակները
1:12-14	1:12-18	1:12-14	1:12-14	1:12-26
1:15-26		1:15-18ա 1:18բ-26	1:15-17 1:18-26	
	Ապրելը Քրիստոս է			
	1:19-26			
	Քրիստոսի համար պայքարել և չարչարվել			Պայքար հավատքի համար
1:27-30	1:27-30	1:27-30	1:27-30	1:27-30

* Չնայած որ դրանք ներշնչված չեն, պարբերությունների բաժանումները կարևոր են բնագրի հեղինակի մտադրությունը հասկանալու և դրան հետևելու համար: Ժամանակակից յուրաքանչյուր թարգմանություն բաժանել և ամփոփել է պարբերությունները: Յուրաքանչյուր պարբերություն ունի մի կենտրոնական թեմա, ճշմարտություն կամ գաղափար: Յուրաքանչյուր տարբերակ պարփակում է այդ թեման իրեն իսկ հատուկ՝ առանձնակի կերպով: Երբ կարդում եք տեքստը, հարցրե՛ք ինքներդ ձեզ, թե որ թարգմանությունն է համապատասխանում թեմայի և համարի բաժանման ձեռնարկային նշաններին:

Յուրաքանչյուր գլխում մենք առաջինը պետք է կարդանք Աստվածաշունչը և փորձենք առանձնացնել դրա թեմաները (պարբերությունները), ապա համեմատենք մեր հասկացածը ժամանակակից տարբերակների հետ: Մենք կարող ենք իրապես հասկանալ Աստվածաշունչը միայն այն դեպքում, երբ կհասկանանք բնագրի հեղինակի մտադրությունը՝ հետևելով նրա տրամաբանության ու ներկայացնելու ձևին: Միայն բնագրի հեղինակն է եղել ներշնչված. ընթերցողները իրավունք չունեն ուղերձը փոփոխելու կամ խմբագրելու: Աստվածաշնչի ընթերցողները պարտավոր են կիրառելու իրենց օրերի և կյանքերի համար այդ ներշնչված ճշմարտությունները: Ուշադրություն դարձրե՛ք, որ բոլոր տեխնիկական տերմիններն ու հասկացվումները մանրամասն բացատրվում են հետևյալ փաստաթղթերում՝ Հունարեն Քերականական Կազմությունների Համառոտ Սահմանումները, Տեքստային քննադատություն, և Բառարան:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Մուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») **ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ**

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՑՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Փիլ. 1:1-2 ձևավորում է ամբողջ նամակի համար ընդհանուր ներածական: Ներածականը տիպիկ Պողոսյան է, բացառությամբ այն փաստի, որ չկա որևէ շեշտադրում իր առաքյալ լինելու վրա: Այս եկեղեցին և Պողոսն ունեին հրաշալի փոխհարաբերություններ: Նա կարիք չունեի ապացուցելու իր առաքելական իշխանությունը: Ըստ երևույթին այս եկեղեցին ժամանակ առ ժամանակ Պողոսին ֆինանսական աջակցություն էր ուղարկում (տես՝ Փիլ. 1:5,7, 4:15): Մյուս միակ Պողոսյան եկեղեցին, որից մենք գիտենք, որ նա օգնություն էր ստանում, դա Թեսաղոնիկեի եկեղեցին էր (տես՝ 2 Կորնթ. 11:9):

Բ. Առաջին դարի հունարեն նամակները ընդհանրապես սկսվում էին գոհության աղոթքով: Փիլ. 1:3-8 Պողոսի գոհության աղոթքն է Փիլիպպեի եկեղեցու համար: Դրանք բովանդակում են Քրիստոնեության հիմնական ճշմարտություններ և կազմում են նամակի կորիզը:

Գ. Այս գիրքն ունի անսովոր քանակությամբ բաղադրյալ բառեր *syn* (հունարեն «*sun*») մասնիկով, որը նշանակում էր «համագործակից ինչ-որ բանի կամ մեկի հետ»՝

1. Փիլ. 1:7, 4:14 *syn* + հաղորդակցություն (*koinōnia*, միևնույն արմատը. Փիլ. 1:5, 2:1, 3:10, 4:14,16)
2. Փիլ. 1:27 *syn* + պայքար (*athleō* Փիլ. 4:3-ում, հատուկ անուն)
3. Փիլ. 2:2 *syn* + հոգի (*psuchē* միևնույն նշանակությունը Փիլ. 1:27-ում)
4. Փիլ. 2:17-18 *syn* + ուրախանալ (*chairō*)
5. Փիլ. 2:25, 4:3 *syn* + գործավոր (*ergon*, տես՝ Հռոմ. 16:3,9,21, 2 Կորնթ. 1:24)
6. Փիլ. 2:25 *syn* + զինվոր (*stratiōtē*, տես՝ Փիլիմոն 1:2)
7. Փիլ. 3:10 *syn* + ձևավորել (*morphē*)
8. Փիլ. 3:17 *syn* + նախաձեռնող (*animeomai*, միևնույն արմատը 1 Կորնթ. 4:16):

Դ. Փիլ. 1:9-11-ը Պողոսի աղոթքն է եկեղեցու հոգևոր աճման և հասունության համար: Այս համարները կենտրոնանում են փիլիպպեցիների Քրիստոսանման ապրելակերպի վրա, մինչդեռ 3-8 համարները կենտրոնանում են Քրիստոսում նրանց ունեցած դիրքի վրա, այսպիսով միավորելով փրկության այս երկու ասպեկտները՝ մեր դիրքը Քրիստոսի մեջ (դատական արդարացումը և սրբացումը ըստ կարգավիճակի՝ դիրքի) և Քրիստոսակերպության մեջ մեր այդ դիրքի մեջ մնալը (աճող սրբացումը):

Ե. Փիլ. 1:17-26-ում մի քանի ակնարկներ կան, որ Պողոսը սպասում էր բանտից իր ազատվելուն՝

1. «փրկություն՝ ազատություն» տերմինը Փիլ. 1:19-ում
2. Փիլ. 1:22-ի առաջին կարգի պայմանական նախադասությունը
3. Փիլ. 1:25-ում Պողոսի հայտարարությունը
4. Փիլ. 1:26-ի երկիմաստ արտահայտությունը

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻ 1:1-2

¹Պողոսը և Տիմոթեոսը՝ Հիսուս Քրիստոսի ծառաները, Քրիստոս Հիսուսով բոլոր սրբերին, որոնք Փիլիպպեոսն են, երեցների ու սարկավագների հետ միասին, ²չնո՞րի և խաղաղություն ձեզ մեր Հայր Աստուծոց և Տեր Հիսուս Քրիստոսից:

1:1 «Պողոս» Հունարեն Պողոս անունը նշանակում է «փոքրիկ»: Նրա անվան ծագման շուրջ եղել են մի քանի տեսություններ:

1. նրա ֆիզիկական հասակը նկարագրող մականուն. երկրորդ դարի մի ավանդությունից հայտնի է, որ Պողոսը կարճահասակ էր, գիրուկ, ճաղատ, ծուռոտ, թավահոնք, և ուներ դուրս պրծած աչքեր, որը մեզ է հասել Թեսաղոնիկեից եկած մի անկանոն գրքից, որը կոչվում էր *Պողոսը և Թեկղան*, և նրա անվան ծագման հավանական աղբյուր է
2. Պողոսի անձնական հոգևոր գնահատականը. նա հաճախ էր ինքն իրեն անվանում «սրբերից ամենափոքրը», քանի որ հավածել էր Եկեղեցին, ինչպես արձանագրված է Գործք 9:1-2-ում (տես՝ 1 Կորնթ. 15:9, Եփես. 3:8, 1 Տիմ. 1:15)
3. սիյուռքի հրեաներից շատերին (հրեաներ, որոնք ապրում էին Պաղեստինից դուրս) ծննդյան ժամանակ երկու անուն էին դնում՝ մեկը եբրայերեն (Սողոս), իսկ մյուսը՝ Հելլենական (Պողոս):

❖ **«Տիմոթեոս»** Նրա անունը նշանակում էր «Աստուծոց պատիվ ստացած» կամ «Աստուծու պատվող»: Նա դարձի էր եկել Պողոսի վկայությամբ՝ դեպի Դերբե, Լյուստրա նրա առաջին միսիոներական ճամփորդության ժամանակ (տես՝ Գործք 26:1): Պողոսը հրավիրեց նրան միանալու միսիոներական թիմին երկրորդ ճամփորդության ժամանակ, հավանաբար փոխարինելու Հովհաննես Մարկոսին (տես՝ Գործք 15:36-41): Նա ուներ հրեա մայր և հույն հայր (Գործք 16:1, 2 Տիմ. 1:5): Պողոսը նրան թվատեց, որպեսզի պատրաստի նրան ծառայելու հրեաների մեջ (տես՝ Գործք 16:3): Նա դարձավ Պողոսի հավատարիմ ներկայացուցիչը, աշակերտը և դժվարությունները հարթողը (տես՝ Գործք 16:1-17:14, 18:5-19:22, 20:4, Հռոմ. 16:21, 1 Կորնթ. 4:17, 16:10, 2 Կորնթ. 1:1, 19, Փիլ. 1:2, 2:19, Գաղ. 1:1, Փիլիմ. 1:4 և 1 Տիմոթեոս և 2 Տիմոթեոս երկու գրքերը): Պողոսը հատուկ նրան ուղարկեց Փիլիպպե, որպեսզի օգնի եկեղեցուն (տես՝ Գործք 19:22, Փիլ. 2:19-24):

❖ **«կապյալ/ ծառաները»** Սա վերաբերում է՝

1. ՀԿ-յան պատվավոր տիտղոսի, որը կապված էր ՅԱՀՎԵԻ հետ (տես՝ Մովսես՝ Ելից 14:31, Հեսու՝ Դատ. 2:8, մարգարեները՝ Եզրաս 9:11, Երեմ. 7:25, մարգարեներ՝ Դան. 9:6, Ամովս 3:7 և Դավիթ՝ Սաղմ. 78:70):
2. Հիսուսին, որպես Տեր շեշտադրությամբ (*kurios*) և հավատացյալներին՝ որպես Նրա ծառաները (*doulos*):

❖ **«բոլոր սրբերին»** Սա բառացի նշանակում է «սուրբ մարդկանց» (*hagoi*), նրանք, որ առանձնացված են հատուկ Աստծո ծառայության համար: Սա չի ակնարկում անմեղ կյանքեր, այլ հավատացյալների իրավական (օրինական) դիրքը Քրիստոսում: Այն միշտ կիրառվում է հոգնակի թվով՝ բացառությամբ Փիլ. 4:21-ը, սակայն նույնիսկ այնտեղ կիրառվում է հավաքական համատեքստում: Փրկվել նշանակում է լինել ընտանիքի մի մաս: Այս տերմինն արտացոլում է ՀԿ-յան կիրառությունը հավաքական Իսրայելի՝ որպես սուրբ ժողովրդի համար (տես՝ Ելից 13:5, 19:5-6, 2 Օրինաց 7:6, 1 Պետ. 2:9 և Հայտն. 1:6):

Չնայած «սուրբեր» տերմինը առնչվում է հավատացյալների Քրիստոսի մեջ ունեցած դիրքի հետ, պատահական չէ, որ արմատ հանդիսացող բառը «սուրբն» է (*hagios*): Հավատացյալները կանչված են ոչ միայն փրկության, այլ նաև պրոգրեսիվ սրբության: Հավատացյալները նախասահմանված են «սրբության» (*hagiasmos*, տես՝ Եփես. 1:4)՝ ոչ թե պարզապես երկնքի, ծառայության՝ ոչ թե առանձնաշնորհման համար: Տես՝ Հատուկ Թեմա. Սրբեր, Կող. 1:2-ում:

❖ «**Քրիստոս Հիսուսով**» Սա ներգոյական է (ոլորտային): Սա Պողոսի կողմից հավատացյալներին նկարագրելու ամենասիրելի կերպն է: Սա խոսում է այն անհրաժեշտ մթնոլորտի կամ միջավայրի մասին, որում ապրում են Քրիստոնյաները (տես՝ Գործք 17:28): Աստվածաբանորեն այն համազոր է Հովհաննեսի «Նրա մեջ բնակվել» խոսքին (տես՝ Հովհաննես 15):

Այս կազմությունը հաճախ ասոցացվում է Քրիստոսի հետ մտերմիկ փոխհարաբերության հետ: Այն վերաբերում է հավատացյալի ենթակայական փորձառությանը (տես՝ Հռոմ. 3:24, 4:17, 8:39, 15:17, 1 Կորնթ. 1:2, Գաղ. 2:17, Եփես. 1:4,7, Փիլ. 1:13, 2:1,5, 4:7,13): Որոշ հաստատվածներում «Քրիստոսում» խոսքը գրեթե հոմանիշ է «եկեղեցում» խոսքին (տես՝ Հռոմ. 12:5, 1 Կորնթ. 4:15, Գաղ. 1:22, 3:28, Եփես. 3:6, Կող. 1:2): Պողոսի կողմից այս տերմինի կիրառությունը լուսաբանելու համար ուշադրություն դարձրեք Եփես. 1:3-14՝ (1) Քրիստոսում՝ Փիլ. 1:3, 10, 12, (2) Նրանում՝ Փիլ. 1:4, 7, 10, 13 /երկու անգամ/, (3) Սիրելիի մեջ՝ Փիլ. 1:6:

❖ «**Փիլիպպեում**» Սա Հռոմեական մի գաղութ էր (տես ներածությունը):

NASB	«երեցներ»
NKJV, NRSV	«եպիսկոպոսներ»
TEV	«եկեղեցու առաջնորդներ»
NJB	«նախագահող երեցներ»

Այս տիտղոսները (1) «հովիվ», (2) «երեց», (3) «եպիսկոպոս» կամ (4) «վերակացու» բոլորն էլ վերաբերում են տեղական եկեղեցու միևնույն գործառույթին (տես՝ Գործք 20:17, 28 և Տիտոս 1:5,7): «Վերակացուներ» (*episkopoi*) ուներ հունական քաղաքական-պետական ծագում՝ հիմք, մինչդեռ «երեցներ» (*presbuteroi*) տերմինն ունի հրեական ծագում: Հնարավոր է նաև, որ «վերակացու» բառն ունի հրեական ծագում Մեդյալ Ծովի Գալարներում *mebaqqerim* (1QS 6:11, 20) տերմինի կիրառմամբ: Նաև ուշադրություն դարձրեք հոգնակի թվին (տես՝ Գործք 20:17, Եփես. 4:21): Փիլիպպեն ուներ մի եկեղեցի՝ բազմաթիվ առաջնորդներով:

Այս տերմինների միջև գործառույթային (քաղաքականություն) տարբերակում դնելու միտումները պատճառ հանդիսացան, որ Փիլ. 1:1 համարում որոշ հունարեն ձեռագրեր՝ MSS B³, D^C և K փոխեն (*syn*)-ով՝ «երեցներով (*episcopois*)» խոսքը դարձնելով «(*synepiscopois*) համագործակից երեցներ»:

NASB, NKJV,	«սարկավագներ»
NRSV, NJB	«օգնականներ»
TEV	

Սա տնային ծառաների համար օգտագործվող հունարեն տերմին է (*diaconoi*): Դրա սկզբնական ստուգաբանությունն էր «սրբելով փոշի բարձրացնել»: Այն մի ընդհանուր տերմին էր, որ կիրառվում էր Հիսուսի ծառայության համար Մարկոս 10:43-45-ում, Առաքյալների համար՝ Գործք 1:17-ում և հոգևոր պարզների համար՝ 1 Կորնթ. 12:5-ում: Այս տերմինը պաշտպանում է տեղական եկեղեցու երկու առաջնորդական գործառույթներ, չնայած որ 1 Տիմ. 3:11-ում նաև նշվում է ավելի տարեց կանանց (որբևայրիների դերը) մասին: Այս տերմինները սկզբնապես եղել են որպես գործառույթներ, սակայն շատ արագ կերպով դրանք դարձել են որպես տիտղոսներ և պաշտոններ (տես՝ I Կղեմես 42 և *Իզնատիուսի Թուղթը Տրալիսաններին*, 3:1 և *Զմյուռնիային ուղղված թուղթը*, 8:1): Անտիոքցի

Իզնատիուսը (երկրորդ դարի սկիզբ) սկսեց Կաթոլիկ ավանդույթը՝ կիրառելով «Եպիսկոպոս» (վերակացու) տերմինը, որը վերագրված է մեկի, ով գերակայում է տեղական մյուս առաջնորդներին: ՆԿ-ը արտացոլում է եկեղեցու առաջնորդական բոլոր երեք ձևերը՝

1. եպիսկոպոսական համակարգը (առաքյալներ)
2. երիցական համակարգը (երեցներ)
3. համայնքային մոդելը

Բոլոր երեքն էլ կարելի է տեսնել Գործք 15-ի Երուսաղեմի Խորհրդում: Ձևն այնքան էլ նշանակալի չէ, որքան առաջնորդների հոգևոր վիճակը (տես՝ 1 Տիմ. 3:1-13): Իշխանության հասնելն ու պահելը միտում ունի ապականելու ամեն ինչ որ հանդիպում է ճանապարհին:

1:2 «շնորհք» Այս հունարեն բառը (*charis*) նման է սովորական հունարենի բացման «ողջույնին» (*charein*, տես՝ Հակոբոս 1:1): Պողոսը հունարական ավանդական ողջույնի ձևը դարձրել է յուրահատուկ Բրիստոնեական: Պողոսի առաքյալ լինելը նշող որևէ ակնարկի բացակայությունը նշանակալի է: Նրա նամակներից շատերը սկսում են իր առաքյալական իշխանությունը հաստատող խոսքով (տես՝ Հռոմ., 1 և 2 Կորնթ., Եփես., Կող., 1 և 2 Տիմ., և Տիտոս): Պողոսն ուներ հրաշալի փոխհարաբերություն այս տեղական եկեղեցու հետ:

❖ **«և խաղաղություն»** Հնարավոր է, որ սա արտացոլում է եբրայերենի *Shalom* տերմինը: Պողոսը հավանաբար համադրել է հունարեն և եբրայերեն ողջույնի ձևերը որպես եկեղեցու մեջ այս երկու խմբերի ճանաչման՝ ընդունելության մի կերպ:

Ունանք պնդում են, որ գոյություն ունի Պողոսի կողմից խաղաղությունից առաջ շնորհքը նշելու հատուկ աստվածաբանական նշանակություն: Դա իհարկե այդպես է, սակայն չի հանդիսանում որպես աստվածաբանական հայտարարություն, այլ բացման ողջույնի խոսք: Տես՝ Հատուկ Թեմա Կող. 1:20-ում:

❖ **«Հայր Աստծուց»** Հիսուսը սովորեցնում էր հավատացյալների ՅԱՀՎԵյին անվանել մտերմիկ ընտանեկան անվամբ՝ Հայր (տես՝ Մատթ. 6:9): Սա ամբողջությամբ փոխում է Աստվածության հանդեպ մարդու ամբողջ կարծիքը (տես՝ Ովսեա 11): «Աստծո» գաղափարը ինքնին հաղորդում է անհասանելիության իմաստ, մինչդեռ «Հայր» բառը ավելացնում է հասանելիության՝ մտերմության երանգ, անգամ ընտանեկան մտերմության: Տես՝ Հատուկ Թեմա Կող. 1:2-ում:

❖ **«Տեր Հիսուս Քրիստոս»** Այս ամբողջական անվանումը շեշտադրում է Հիսուսի աստվածությունը (Տեր, ինչպես ՅԱՀՎԵ), մարդեղությունը (Նրա մարդկային անունը), և տիտղոսը (Մեսիա, օծյալ): Այս ամբողջական անունը քերականորեն կապված է «Հորը՝ մեր Աստծուն» երկուսի համար էլ միևնույն նախդիրով: Սա ՆԿ-յան հեղինակների կողմից Հիսուսի աստվածությունը և Աստծո հետ Նրա հավասարությունը հաստատելու կերպերից մեկն էր: Գոյություն ունի միայն մեկ աստվածային էություն, սակայն երեք անձնական դրսևորմամբ: Տես ամբողջական գրառումը Կող. 1:1 և Եփես. 1:1-2-ում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻ 1:3-11

³Ամեն անգամ ձեզ հիշելիս գոհություն եմ հայտնում իմ Աստծուն, ⁴(միշտ ամեն մի աղոթքում ձեզ՝ բոլորիդ ուրախությամբ հիշատակելով), ⁵առաջին օրվանից մինչև հիմա ավետարանի հետ ձեր ունեցած հաղորդակցության համար, ⁶այս բանում վստահ լինելով, թե Նա՝ Ով ձեր մեջ սկսեց բարի գործը, այն կհասցնի իր ավարտին մինչև Հիսուս Քրիստոսի օրը: ⁷Ես իրավունք ունեմ ձեզ՝ բոլորիդ մասին այսպես մտածելու, որովհետև ձեզ իմ սրտում ունեմ, քանի որ թե՛ իմ կապանքների և թե՛ ավետարանի հաստատման ու պաշտպանման ժամանակ, բոլորդ իմ շնորհի մասնակիցները եղաք: ⁸Աստված իմ վկան է, թե ինչպես մեծապես կարոտում եմ ձեզ բոլորիդ՝ Հիսուս Քրիստոսի խանդաղատությամբ: ⁹Եվ այս մասին եմ աղոթում, որ ձեր սերն ավելի ու ավելի առատանա գիտությամբ ու ամեն հասկացողությամբ, ¹⁰որպեսզի դուք լավագույնն ընտրեք, որ լինեք անկեղծ և առանց

գայթակղության՝ Քրիստոսի օրվա համար, ¹¹արդարության պտուղներով լցված, որոնք Հիսուս Քրիստոսի միջոցով են, Աստծո փառքի և փառաբանության համար:

1:3 «Ամեն անգամ ձեզ հիշելիս գոհություն եմ հայտնում իմ Աստծուն» Այս «հիշելիս» խոսքը կարող է վերաբերել (1) Պողոսին ուղարկած իրենց դրամական ընծաներին. հունարեն “*epi*” նախդիրը կարող է արտահայտել պատճառ կամ գոհություն (տես՝ Ջեյմս Մոֆֆաթի թարգմանությունը և Փիլ. 1:5,7) կամ (2) Պողոսի սովորական բացման շեշտադրությունը «հիշել» բառի վրա՝ ինչպես օրինակ Հռոմ. 1:8-9, Եփես. 1:16, 1 Թեսաղ. 3:6, Փիլիմոն 1:4-ում է:

1:4 «միշտ աղոթքում ուրախությամբ հիշատակելով» Ուրախությունը պարբերաբար կրկնվող շեշտադրում է այս գրքում (*chara*, տես՝ Փիլ. 1:4, 25, 2:2, 29, 4:1), «ցնծացեք» (*chairō*, տես՝ Փիլ. 1:18, 2:17,18,28, 3:1, 4:4 /երկու անգամ/, 10), «ցնծացեք... հետ» (*sunchairō*, տես՝ Փիլ. 2:17,18): Սա շատ ավելի կարևոր է Պողոսի բանտարկության և մահվան ճանապարհին լինելու ֆոնի վրա:

❖ **«ձեզ բոլորիդ»** «Բոլոր», «միշտ» և «ամեն անգամ» խոսքերը հատկանշական են Փիլիպպեցիներին ուղղված նամակին (տես՝ Փիլ. 1:3,4,7,8.25; 2:17, 4:4,5,6,8,13,21): Դրանք հնարավոր է առնչվում են հույն սուտ վարդապետների կամ հրեա էքսկյուզիվիզմի միջոցով պատմականորեն և աստվածաբանորեն պատճառած բաժանումներին:

1:5

**NASB
NKJV
NRSV
TEV
NJB**

**«ձեր մասնակցությունը ավետարանի մեջ»
«ձեր հաղորդակցությունը ավետարանի մեջ»
«ավետարանի տարածման մեջ ձեր բաժնեկից լինելը»
«ինչպես որ ինձ օգնել էք ավետարանի գործում»
«ավետարանի տարածման մեջ ձեր գործակցությունը»**

Այս բանալի տերմինը (*koinōnia*) նշանակում է՝

1. «համագործակցություն... մեջ»
2. «հաղորդակցություն... մեջ» (տես՝ Փիլ. 4:15)
3. դրամ տալ համար գործածվող դարձվածք (տես՝ Փիլ. 4:15, Հռոմ. 12:13, 15:26, 2 Կորնթ. 9:13, Գաղ. 6:6, 1 Տիմ. 6:18), հետևաբար այն կարող է վերաբերել Պողոսին ուղարկած այս եկեղեցու դրամական ընծային (տես՝ Փիլ. 1:7, 4:10,14-18)

Տե՛ս՝ Հատուկ Թեմա Փիլ. 2:1-ում:

❖ **«առաջին օրվանից մինչև հիմա»** Սա առնչվում է Գործք 16:12-40-ի հետ: Այս արտահայտությունը սահմանում է նախորդող արտահայտությունը, որն ավելի շատ վերաբերում է ավետարանի ծառայության մեջ նրանց մասնակցությանը, քան ֆիանանսական ընծային:

1:6 «վստահ լինելով» Սա վաղակատար ներգործական դերբայ է՝ «համոզել» արմատից, որը նշանակում է «ես եղել եմ և շարունակում եմ մնալ վստահ»:

❖ **«Նա՛ Ով ձեր մեջ սկսեց բարի գործը»** Սա անորոշ կատարյալ չեզոք սեռի (դեպոնենտ) դերբայ է: Աստված (*Theos*) տեքստում չկա, սակայն Նա ենթադրվում է այնտեղ (տես՝ Հռոմ. 8:11, Գաղ. 1:6, 15 և 1 Թեսաղ. 5:24): Չեզոք սեռը շեշտադրում է սուբյեկտի մասնակցությունը բայի գործողության մեջ: Այդուհանդերձ, այն անորոշ կատարյալ (դեպոնենտ) կազմությամբ է, որը նշանակում է, որ այս տերմինը Պողոսի օրերում չուներ ներգործական տեսքը՝ ձևը, հետևաբար չեզոք սեռը հնարավոր է գործածվել է որպես ներգործական սեռ: Պետք է որ աստվածաբանական հավասարակշռություն լինի Աստծո նախաձեռնող սիրո և մարդկության սկզբնական ու շարունակելի հավատքի արձագանքի միջև: Այն կարող է վերաբերել՝

1. եկեղեցու ստեղծմանը՝ սկզբին

2. ավետարանի մեջ նրանց մասնակցության մեկնարկին՝ սկզբին
3. նրանց անձնական փրկության սկզբին

NASB
NKJV
NRSV
TEV
NJB

«կկատարի այն»
«կհասցնի այն»
«կհասցնի իր ավարտին»
«այն կտանի այնքան մինչև որ ավարտվի»
«կշարունակի այն ավարտելու»

Սա ապառնի ներգործական սեռի սահմանական եղանակ է, որը կարող է վերաբերել դեպքի որոշակիությանը՝ հաստատ լինելուն: Հավատացյալներն ապրում են Աստուծո Արքայության «արդեն իսկի» և «դեռ ոչի» միջև առկա լարվածության մեջ: Լիարժեք և կատարյալ արքայության օգուտները ապագա են, սակայն քաղաքացիությունը և կարգավիճակը՝ ներկա: Հավատացյալներն ապրում են հրեական երկու դարաշրջանների միաձուլման հատվածում: Նոր դարաշրջանը հասել է (Բեդեհեմ-Պենտեկոստե), սակայն հինը մնում է (թե՛ ֆիզիկական ստեղծագործության մեջ և թե՛ անկում ապրած մարդկության մեջ մեղավոր՝ ընկած բնությունը):

❖ **«Հիսուս Քրիստոսի օրը»** Պողոսի նամակների բացման խոսքերում Երկրորդ Գալստյանը վերաբերող տարրը հատկանշական է (տես՝ 1 Կորնթ. 1:7,8, 2 Կորնթ. 1:10, Կող. 1:5, 1 Թեսաղ. 1:10 և 2 Թեսաղ. 1:4բ): Այս էսկատոլոգիական (վախճանաբանական) իրադարձությունը նաև երևում է Փիլ. 1:6,10, 2:16-ում:

Էսկատոլոգիական շեշտադրությունը Գալստյան հատուկ օրվա վրա, երբ մարդիկ հանդիպելու են Հիսուսին (որպես Փրկիչ կամ Դատավոր) Պողոսի թղթերում արտահայտվում է մի քանի սահմանումներով՝

1. «Տեր Հիսուս Քրիստոսի օրը» (տես՝ 1 Կորնթ. 1:8)
2. «Տիրոջ օրը» (տես՝ 1 Կորնթ. 5:5, 1 Թեսաղ. 5:2, 2 Թեսաղ. 2:2)
3. «Տեր Հիսուսի օրը» (տես՝ 1 Կորնթ. 5:5, 2 Կորնթ. 1:14)
4. «Հիսուս Քրիստոսի օրը» (տես՝ Փիլ. 1:6)
5. «Քրիստոսի օրը» (տես՝ Փիլ. 1:10, 2:16)
6. «Նրա օրը /Մարդու Որդու/» (տես՝ Ղուկ. 17:24)
7. «Մարդու Որդու հայտնվելու օրը» (տես՝ Ղուկ. 17:30)
8. «Մեր Տեր Հիսուս Քրիստոսի հայտնությունը» (տես՝ 1 Կորնթ. 1:7)
9. «Երբ Տեր Հիսուսը հայտնվի երկնքից» (տես՝ 2 Թեսաղ. 1:7)
10. «մեր Տեր Հիսուս Քրիստոսի առջև, Նրա գալստյան ժամանակ» (տես՝ 1 Թեսաղ. 2:19)

ՀԿ-ում հեղինակները տեսնում էին երկու դարաշրջան՝ չար դարաշրջանը և գալիք արդարության՝ Սուրբ Հոգու դարաշրջանը (տես՝ Հատուկ Թեմա Եփես. 1:21-ում): Աստված պատմության մեջ միջնորդելու էր Իր Մեսիայի միջոցով, որպեսզի սկսի այս նոր դարաշրջանը: Այս իրադարձությունը հայտնի է որպես Տիրոջ օր: Նկատել, որ ՆԿ-ի հեղինակները սա վերագրում են Քրիստոսին: Նրա առաջին գալուստը, Մարմնացումը կանխասվել էր ՀԿ-յան բազմաթիվ տեքստերում: Հրեաները չէին ակնկալում աստվածային անձնավորություն, այլ պարզապես՝ աստվածային միջնորդություն: Մեսիայի երկու գալուստները՝ մեկը որպես Չարչարվող Ծառա և Փրկիչ, մյուսը որպես Դատավոր և Տեր, հայտնի չէին ՀԿ-յան ժողովրդին:

❖ **«Նա՛ Ով սկսեց... այն կհասցնի ավարտին»** Երկու տերմիններն էլ՝ «սկսեց» և «կհասցնի ավարտին», զոհը սկսելու և ավարտելու համար օգտագործվող տեխնիկական տերմիններ էին (տես՝ Հռոմ. 12:1-2):

1:7
NASB, NKJV
NRSV

«ձեզ իմ սրտում ունենմ»
«Դուք ինձ ձեր սրտում եք պահում»

TEV
NJB

«դուք միշտ իմ սրտում եք»
«դուք տեղ ունեք իմ սրտում»

Հունարեն արտահայտությունը երկիմաստ է: Այն կարող է վերաբերել նրանց հանդեպ Պողոսի սիրույն (NASB, NKJV, TEV) կամ Պողոսի հանդեպ նրանց սիրույն (NRSV): Տես Հատուկ Թեմա Կող.2:2-ում:

NASB, NKJV, NRSV
TEV
NJB

«ավետարանի հաստատումն ու պաշտպանումը»
«պաշտպանեք ավետարանը և ամուր հաստատեք այն»
«ավետարանը պաշտպանելով և հաստատելով»

Սրանք տեխնիկական տերմիններ էին «օրինական պաշտպանության» համար: Առաջին տերմինը *apologia* է (տես՝ Գործք 22:1, 25:16, 2 Տիմ. 4:16), երկրորդը՝ *bebaiōsis* (տես՝ Եբր. 6:16 և Ջեյմ Մուլթոն և Ջորջ Միլիգան, *Պապիրուսներից և այլ ոչ-գրականական աղբյուրներից լաստաբանված հունարեն Կոտակարանի Բառարան*, էջ՝ 108, որն ասում է, որ սովորաբար այն «օրինապես երաշխավորվում էր»): Սա կարող էր վերաբերել Պողոսի (1) Ներոնի կամ այլ կառավարական առաջնորդների առջև կանգնելուն կամ (2) նրա կողմից ավետարանի քարոզչությանը:

❖ «բոլորդ իմ շնորհի մասնակիցները եղաք» Սա “*syn*” և “*koinonia*” նախդիրների հետ կազմված բաղադրյալ տերմին է: Այն արտահայտում էր այս հավատացյալների հետ Պողոսի միաբանության զգացողությունները: Այս գիրքն ունի “*syn*” –ի հետ կազմված անսովոր քանակությամբ բաղադրյալ բառեր, որը նշանակում էր «համագործակից» ինչ որ բանի հետ՝

1. Փիլ. 1:7, 4:14 *syn* + հաղորդակցություն (*koinonia*)
2. Փիլ. 1:27 *syn* + համագործակցություն
3. Փիլ. 2:2 *syn* + շունչ կամ միտք
4. Փիլ. 2:17-18 *syn* + ուրախանալ
5. Փիլ. 2:25, 4:3 *syn* + գործավոր
6. Փիլ. 2:25 *syn* + զինվոր
7. Փիլ. 3:10 *syn* + կերպար
8. Փիլ. 3:17 *syn* + նախաձեռնող
9. Փիլ. 4:3 *syn* + մշակ (կամ հատուկ անուն)

«Հաղորդակից» (*koinōnia*) բառի համար տարբեր ձևեր նույնպես հանախ են հանդիպում (տես՝ Փիլ. 1:5, 7, 2:1, 3:10, 4:14, 16): Պողոսը եկեղեցու հետ հոգով և ծառայությամբ մեկ՝ միասնական էր զգում:

1:8 «Աստված իմ վկան է» Պողոսը օգտագործում է երդում: Սա իր նշմարտացիությունը հաստատելու ընդունված կերպն էր (տես՝ Հռոմ. 1:9, 2 Կորնթ. 1:23, 1 Թեսաղ. 2:5, 10):

❖ «ինչպես մեծապես կարոտում եմ ձեզ բոլորիդ» Պողոսը օգտագործում է այս տերմինը նկարագրելու իր այս ընկերների հետ լինելու անհազ ցանկությունը (տես՝ Փիլ. 4:1, Հռոմ. 1:11, 1 Թեսաղ. 3:6, 2 Տիմ. 1:4):

❖ «Հիսուս Քրիստոսի խանդաղատությամբ» KJV տարբերակը այս արտահայտությունը թարգմանում է որպես «Քրիստոսի աղիները»: Սա հավանաբար առնչվում է ՀԿ-յան Խորանի զոհասեղանի վրա զոհի ստորին հատվածի ներքին օրգաններին (որոնք քանանացիներն ուտում էին) (տես՝ Ելից 29:13, Ղևա. 3:3-4, 10, 15, 4:8-9, 7:3-4, 8:16, 25, 9:10, 16): Հնում մարդիկ զգացմունքների տեղը համարում էին ստորին հատվածի ներքին օրգանները կամ որովայնը (տես՝ Եսայի 63:15, Երեմ. 4:19): Պողոսի համար այն կապ ուներ սիրո հետ (տես՝ Փիլ. 2:1, 2 Կորնթ. 6:12, 7:15, Փիլ. 1:8, 21, Կող. 3:12, Փիլիմոն 7, 12, 20):

1:9-11 Պողոսն այստեղ աղոթում է եկեղեցու համար: Այս համարները կենտրոնանում են հավատացյալների Քրիստոսանման կյանքերի վրա, մինչդեռ Փիլ. 1:3-8 կենտրոնանում է Քրիստոսի մեջ նրանց ունեցած դիրքի վրա: Մա միավորում է փրկության երկու ասպեկտները՝ Քրիստոսում մեր ունեցած դիրքը (օրինական արդարացումը և սրբությունը ըստ մեր կարգավիճակի) և Քրիստոսակերպության մեջ մեր ունեցած այդ դիրքի յուրացումը (անող սրբությունը): Փիլ. 1:9-11-ը հունարենում մի նախադասություն է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՐԱՏԵՎՈՒԹՅՈՒՆ
SPECIAL TOPIC: PERSEVERANCE

Դժվար է բացատրել աստվածաշնչյան այն վարդապետությունները, որոնք կապված են Քրիստոնեական ապրելակերպի հետ, քանի որ դրանք ներկայացված են տիպիկ արևելյան, բարբառային զուգակցությամբ: Այս զուգակցումները կարծես թե հակասական են, սակայն դրանց երկու բևեռներն էլ աստվածաշնչյան են: Արևմտյան Քրիստոնյաները հակված են ընտրելու մի ճշմարտությունը և անտեսելու կամ թերազնահատելու հակառակ ճշմարտությունը: Ահա մի քանի օրինակներ՝

1. Արդյո՞ք փրկությունը Քրիստոսին վստահելու առաջին՝ սկզբնական որոշումն է, թե աշակերտ լինելու ցմահ՝ ամբողջ կյանքի ընթացքում նվիրումը:
2. Արդյո՞ք փրկությունը ամենակալ Աստծո շնորհքի միջոցով ընտրված լինելն է, թե աստվածային այդ հրավերին՝ առաջարկին հավատքով և զղջումով մարդու կողմից տրված պատասխան:
3. Արդյո՞ք փրկությունը, երբ ընդունվում է մարդու կողմից, այլևս անհնար է կորցնել, թե կարիք կա ջանք անել հարատևելու մեջ:

Հարատևության խնդիրը եկեղեցու ամբողջ պատմության ընթացքում մշտապես առկա է եղել: Խնդիրը սկսվում է ՆԿ-ի թվացյալ կոնֆլիկտային հատվածներով՝

1. փրկության վստահության վերաբերյալ տեքստերը՝
 - ա. Հովհաննեսի ավետարանում Հիսուսի խոսքերը (Հովհ.6:37, 10:28-29)
 - բ. Պողոսի խոսքերը (Հռոմ. 8:35-39, Եփես.1:13, 2:5,8-9, Փիլ.1:6, 2:13, 2 Թեսաղ.3:3, 2 Տիմ.1:12, 4:18)
 - գ. Պետրոսի խոսքերը (1 Պետ.1:4-5)
2. Հարատևության անհրաժեշտության շուրջ տեքստեր՝
 - ա. Հիսուսի խոսքերը Համանման Ավետարաններում (Մատթ.10:22, 13:1-9,24-30, 24:13, Մարկ. 13:13)
 - բ. Հիսուսի խոսքերը Հովհաննեսի Ավետարանում (Հովհ.8:31; 15:4-10)
 - գ. Պողոսի խոսքերը (Հռոմ.11:22, 1 Կորնթ.15:2, 2 Կորնթ.13:5, Գաղ.1:6, 3:4, 5:4, 6:9, Փիլ.2:12, 3:18-20, Կող.1:23, 2 Տիմ.3:2)
 - դ. Եբրայեցիների հեղինակի խոսքերը (2:1, 3:6,14, 4:14, 6:11)
 - ե. Հովհաննեսի խոսքերը (1 Հովհ.2:6, 2 Հովհ.9, Հայտն.2:7,17,26, 3:5,12,21, 21:7)

Աստվածաշնչյան փրկությունը բխում է ամենակալ Երրորդության Աստծո սիրուց, ողորմությունից և շնորհքից: Ոչ մի մարդ չի կարող փրկվել առանց Մուրբ Հոգու նախաձեռնության (տես՝ Հովհ.6:44,65): Աստված առաջինն է գալիս և սահմանում կարգը, սակայն պահանջում է, որ մարդիկ պատասխանեն հավատքով և ապաշխարությամբ, թե՛ սկզբում և թե՛ հարատևորեն: Աստված աշխատում է մարդկանց հետ ուխտի փոխհարաբերության մեջ: Կան արտոնություններ և պատասխանատվություններ:

Փրկությունը առաջարկվում է ամբողջ մարդկությանը: Հիսուսի մահը լուծեց մեղավոր մարդկության մեղքի հարցը: Աստված մի ճանապարհ է պատրաստել և կամենում է, որ բոլոր նրանք, որ ստեղծված են Իր պատկերով արձագանքեն Իր սիրուն և Հիսուսի մեջ մեզ տրված փրկությանը: Եթե կամենում եք այս թեմայի շուրջ ավելի շատ իմանալ, կարդացեք՝

1. Դեյլ Մուդի, *Ճշմարտության Խոսքը* (Dale Moody, *The Word of Truth*, Eerdmans, 1981 (էջ՝ 348-365))

2. Հովարդ Մարշալ, *Աստծո Չորությունը Պահված*, (Howard Marshall, *Kept by the Power of God*, Bethany Fellowship, 1969)

3. Ռոբերտ Շանք, *Կյանք Որդու մեջ* (Robert Shank, *Life in the Son*, Westcott, 1961)

Այս ոլորտում Աստվածաշունչը երկու տարբեր խնդիրներ է մատուցում. (1) փրկության վստահությունը անպտուղ, եսասիրական կյանք ապրելու համար որպես անցառույթ օգտագործելը, կամ (2) նրանք, որ ծառայության կամ անձնական մեղքի հետ կապված խնդիրների մեջ են, քաջալերելը: Խնդիրն այն է, որ սխալ խմբեր ընդունում են սխալ պատգամներ և աստվածաշնչյան մի քանի՝ սահմանափակ հատվածների հիման վրա կառուցում են աստվածաբանական համակարգեր: Որոշ Քրիստոնյաներ կարիք ունեն փրկության վստահության, մինչդեռ ոմանց անհրաժեշտ է հարատևության համար խիստ զգուշացում: Ո՞ր խմբին եք դուք պատկանում:

Գոյություն ունի պատմական աստվածաբանական մի հակամարտություն, որի մեջ ներգրավված են Օգոստինոսն ընդդեմ Պելագիոսի և Կալվինն ընդդեմ Արմենիանիզմի (հակապելագյան): Խնդրի մեջ առկա է փրկության հարցը. եթե մեկը իրոք փրկված է, պե՞տք է արդյոք հարատևի հավատքի և պտղաբերության մեջ:

Կալվինիստները պաշտպանում են աստվածաշնչյան այն տեքստերը, որոնք ընդունում են Աստծո ամենակալությունն ու պահող գործությունը (Հովհ.10:27-30, Հռոմ.8:31-39, 1 Հովհ.5:13,18, 1 Պետ.1:3-5) և Եփես.2:5,8-ի պես ՎԱՂԱԿԱՏԱՐ Ժամանակի ԿՐԱՎՈՐԱԿԱՆ սեռի ԴԵՐԲԱՅՆԵՐԻ ԲԱՅԻ Ժամանակները:

Հայերը պաշտպանում են աստվածաշնչյան այն տեքստերը, որոնք զգուշացնում են հավատացյալներին «պահել», «ամուր բռնել» կամ «շարունակել» (Մատթ.10:22, 24:9-13, Մարկ. 13:13, Հովհ.15:4-6, 1 Կորնթ.15:2, Գաղ.6:9, Հայտն.2:7,11,17,26, 3:5,12,21, 21:7): Ես անձնապես չեմ հավատում, որ Եբրայեցիներ 6 և 10 գլուխները կիրառելի են, սակայն շատ Հայեր կիրառում են դրանք որպես զգուշացումներ հավատուրացության դեմ: Մատթեոս 13 և Մարկոս 4-ում Սերմնացանի Առակը դիտարկում է տեսանելի՝ ակնհայտ հավատքի հարցը, ինչպես Հովհ.8:31-59-ը: Ինչպես Կալվինիստները ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՅԵՐԵՆ են մեջբերում, որոնք կիրառվել են բնութագրելու փրկությունը, այնպես էլ Հայերը մեջբերում են ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ բայերով հատվածները, ինչպիսիք են 1 Կորնթ.1:18, 15:2, 2 Կորնթ.2:15:

Սա հստակ՝ կատարյալ օրինակ է, թե ինչպես են աստվածաբանական համակարգերը չարաշահում մեկնաբանության տեքստային ապացույցով մեթոդը: Մովորաբար հիմք հանդիսացող որևէ սկզբունք կամ հիմնական տեքստ է կիրառվում աստվածաբանական որևէ ցանց կառուցելու համար, որի միջոցով դիտարկվում են բոլոր մյուս տեքստերը: Չգույշ եղե՞ք ցանկացած տեսակի ցանցերից: Դրանք ծագում են արևմտյան տրամաբանությունից և ոչ թե հայտնությունից: Սակայն Աստվածաշունչը արևելյան գիրք է: Այն ներկայացնում է ճշմարտությունը լարվածությամբ լի, թվացյալ պարադոքսալ զուգակցությամբ: Քրիստոնյաները կանչված են հաստատելու դրանք երկուսն էլ և ապրելու այդ լարվածության մեջ: ՆԿ-ը ներկայացնում է թե՛ հավատացյալի ապահովությունը և թե՛ հավատքի և աստվածապաշտության մեջ շարունակելու պահանջը: Քրիստոնեությունը նախ ապաշխարության և հավատքի պատասխան է, որին հաջորդում է ապաշխարության և հավատքի մշտական՝ շարունակ տրվող պատասխանը: Փրկությունը ապրանք չէ (երկինք տանող տոմս կամ հակահրդեհային ապահովագրության փաստաթուղթ), այլ փոխհարաբերություն: Այն որոշում և աշակերտություն է: ՆԿ-ում այն նկարագրվում է ԲԱՅԻ բոլոր ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՎ:

ԱՈՐԻՍՏ (ավարտված գործողություն), Գործք 15:11, Հռոմ.8:24, 2 Տիմ.1:9, Տիտ.3:5

ՎԱՂԱԿԱՏԱՐ (ավարտված գործողություն շարունակվող արդյունքներով), Եփես.2:5,8

ՆԵՐԿԱ (շարունակվող գործողություն), 1 Կորնթ.1:18, 15:2, 2 Կորնթ.2:15

ԱՊԱՌՆԻ (ապագայի դեպքեր կամ որոշակի՝ հատուկ դեպքեր), Հռոմ.5:8,10, 10:9, 1 Կորնթ.3:15, Փիլ.1:28, 1 Թեսաղ.5:8-9, Եբր.1:14, 9:28:

1:9 «ձեր սերն ավելի ու ավելի առատանա» Սա ներկա ներգործական ստորադասական է, որը շեշտադրում է նրա աղոթքն այն մասին, որ նրանց սերը շարունակի աճել (տես՝ 1 Թեսաղ. 3:12): Մերը ճշմարիտ հավատացյալի ապացույցը և նշանն է (տես՝ 1 Կորնթ. 13, 1 Հովհ. 4:7-20): Տես *Հասուն Թեմա . Առատ (Perisseuo)* Եփես. 1:8-ում:

NASB
NKJV
NRSV
TEV
NJB

«իրական գիտությամբ և ամեն հասկացողությամբ»
«գիտությամբ և ամեն հասկացողությամբ»
«գիտությամբ և լիարժեք պատկերացմամբ»
«ճշմարիտ գիտությամբ և կատարյալ դատողությամբ»
«գիտությունը և կատարյալ հասկացողությունը»

Այս երկու խնդրանքներն էլ բովանդակում են լիարժեք հոգևոր պատկերացում, որը տանում է դեպի Քրիստոսակերպություն (տես՝ Կող. 1:9): Առաջինը՝ *epignōksō* սովորաբար օգտագործվում է ՆԿ-ում փրկության համար անհրաժեշտ գիտության դեպքում (թե՛ ճշմարիտ պատգամին հավատալու և թե՛ ճշմարիտ անձին ընդունելու): Երկրորդը՝ (*aisthēsis*) ավելի մանրակրկիտ կերպով կենտրոնանում և շեշտադրում է ապրելակերպի՝ կյանքի ընտրությունները (տես՝ Փիլ. 2:15): Քրիստոնեական հասունությունը ներառում է բոլոր այս երեք տարրերը՝

1. ճիշտ վարդապետությունը (տես՝ 1 Հովհաննես 4:1-6)
2. անձնական փոխհարաբերությունը (տես՝ Հովհաննես 1:12, 3:16)
3. աստվածահաճո ապրելակերպը (տես՝ 1 Հովհ. 1:7, 2:6)

Սա նաև պահանջում է համբերատարություն (տես՝ Մատթ. 10:22, 24:11-13, Գաղ. 6:9, Հայտն. 2:7, 11, 17, 26, 3:5, 12, 21, 21:7):

1:10 «որպեսզի դուք լավագույնն ընտրեք /անգլ.՝ կարողանաք հաստատել/» Սա մետալուրգիական տերմին էր (*dokimazaō*): Այն կիրառվում էր մետաղադրամների կամ թանկարժեք մետաղների իսկությունը ստուգելու համար: Ժամանակի ընթացքում այն ձեռք բերեց «իսկությունը հաստատելու միտումով ստուգելու» նշանակությունը (տես՝ Հռոմ. 2:18, 1 Կորնթ. 16:3, 1 Թեսաղ. 2:4): Տես՝ Հատուկ Թեմա. Փորձել բառի հունարեն տերմինները և դրանց նշանակությունները, Փիլ. 2:22:

NASB, NKJV
NRSV, TEV
NJB

«բաներ, որոնք գերազանց են»
«այն ինչ լավագույնն է»
«ճշմարիտ հանճար»

Բառացի սա նշանակում է «բաներ, որոնք իրականում իմաստ ունեն»։ Այս նույն արտահայտությունը կարելի է գտնել Հռոմ. 2:18-ում:

NASB, NKJV
NRSV
TEV
NJB

«անկեղծ»
«մաքուր»
«անմաքրությունից զերծ»
«անմեղ»

Սա «արևաշող» (*eilē*) և «դատել» (*krinō*) բառերից կազմված բաղադրյալ տերմին է: Բառացի այն նշանակում էր «լույսի տակ ստուգված»: Ժամանակի ընթացքում այն սկսեց փոխաբերական իմաստ ստանալ անեղծ, անխառն, և հետևաբար (1) անկեղծ (տես՝ 1 Կորնթ. 5:8, 2 Կորնթ. 2:17, 2 Պետ. 3:1) կամ (2) «բարոյապես մաքուր» (տես՝ 2 Կորնթ. 1:12):

NASB, NRSV
NKJV
TEV
NJB

«անարատ»
«առանց վիրավորանքի»
«ազատ մեղադրանքից»
«ազատ ցանկացած մեղքի հետևանքից»

Սա բառացի «առանց վիրավորանքի» կամ «ուրիշին գայթակղության պատճառ չհանդիսացող» (նման 2 Կորնթ. 8:16) է նշանակում: Այս տերմինը նշանակում է կյանք առանց մեղադրանքի (տես՝ Գործք 24:16, 1 Կորնթ. 10:32):

Մեղադրանքի այս հասկացությունը վերաբերում է ՀԿ-յան մեղքին (տես՝ Ծննդ. 44:10, Հեսու 2:17, Գառ. 15:3): Այս անմեղության մասին մի քանի անգամ անդրադարձ է կատարվում Փիլիպպեցիներում (տես՝ Փիլ. 2:15, 3:6): Հավատացյալները պատասխանատու են Քրիստոսում իրենց եղբայրների համար, ինչպես նաև անհավատների համար (տես՝ 1 Տիմ. 3:2,7) դրական վկա լինելու (ապրելակերպով և խոսքով) հարցում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆՄԵՂ, ԱՆԱՐԱՑ, ԱՆՍԻՍԱԼԱԿԱՆ, ԱՌԱՆՑ ՆԱԽԱՏԻՆՔԻ
SPECIAL TOPIC: BLAMELESS, INNOCENT, GUILTLESS, WITHOUT REPROACH

Ա. Բացման սահմանումներ

1. Այս հասկացությունը աստվածաբանորեն նկարագրում է մարդու սկզբնական վիճակը (այսինքն՝ Ծննդոց 1, Եդեմի Պարտեզը):
2. Մեղքը և ապստամբությունը թուլացրեցին կատարյալ փոխհարաբերության այս կարգավիճակը (այսինքն՝ Ծննդոց 3):
3. Մարդկությունը (արու և էգ) փափագում է Աստծո հետ իր փոխհարաբերության վերականգնման, քանի որ նրանք ստեղծվել են Նրա պատկերով ու նմանությամբ այսինքն՝ (այսինքն՝ Ծննդ. 1:26-27):
4. Աստված մեղավոր մարդկության հետ գործ ունեցավ մի քանի կերպերով
ա. աստվածավախ առաջնորդների միջոցով (այսինքն՝ Աբրահամ, Մովսես, Եսայի)
բ. զոհաբերության համակարգի միջոցով (այսինքն՝ Ղևտացիների 1-7)
գ. աստվածահանճ օրինակների միջոցով (այսինքն՝ Նոյ, Հոբ)
5. Ի վերջո Աստված ուղարկեց Մեսիային՝
ա. որպես Իր իսկ կատարյալ հայտնությունը (տես՝ Հովհ. 1:1-14; Կող. 1:13-17; Եբր. 1:2-3)
բ. որպես մեղքի համար կատարյալ զոհ (տես՝ Մարկ. 10:45; 2 Կորնթ. 5:21)
6. Քրիստոնյաները անմեղ են դարձնում
ա. օրինական ճանապարհով՝ Քրիստոսի փոխանորդական արդարությամբ (տես՝ Հռոմ. 4:3,6,8, 11,22,23,24; Հակ. 2:23)
բ. աստիճանաբար Մուրբ Հոգու կատարած գործի միջոցով (Հովհ. 16:8-11)
գ. Քրիստոնեության նպատակը Քրիստոսակերպությունն է (տես՝ Հռոմ. 8:28-30; 2 Կորնթ. 3:18; Գաղ. 4:19; Եփես. 1:4; 4:13; 1 Թեսաղ. 3:13; 4:3; 5:23; 2 Թեսաղ. 2:13; Տիտ. 2:14; 1 Պետ. 1:15), որը իրականում Ադամի և Եվայի մեջ մարդկության կողմից կորցրած Աստծո պատկերի վերականգնումն է:
7. Երկինքը Եդեմի Պարտեզի կատարյալ փոխհարաբերության վերականգնումն է: Երկինքը Նոր Երուսաղեմն է, որն իջնելու է Աստծո ներկայությունից (տես՝ Հայտն. 21:2) սրբագործված երկիր (տես՝ 2 Պետ. 3:10): Աստվածաշունչը սկսում և ավարտվում է միևնույն թեմաներով:
ա. Աստծո հետ մտերմիկ, անձնական փոխհարաբերություն
բ. պարտեզի միջավայրում (Ծննդոց 1-2 և Հայտնություն 21-22)
գ. մարգարեական խոսքով՝ կենդանիների ներկայությունը և նրանց հետ միասին ապրելը (տես՝ Եսայի 11:6-9)

Բ. Հին Կտակարան

1. Գոյություն ունեն այնքան շատ եբրայերեն բառեր, որոնք կրում են կատարելության, անմեղության, անարատության նշանակությունը, որ դժվար կլինի անվանել և ցույց տալ բոլոր մանրակրկիտ առնչությունները՝ կապերը:

2. Ահա այն հիմնական տերմինները, որոնք կրում են կատարելության, անմեղության կամ անարատության նշանակությունը (համաձայն Ռոբերտ Բ. Գրդլսթոունի, *Հին Կտակարանի Հոմանիմներ*, գրքի, էջ՝ 94-99 /Robert B. Girdlestone, *Synonyms of the Old Testament*).
 ա. *shalom* (BDB1022, KB 1532)
 բ. *thamam* (BDB1070, KB 1743)
 գ. *calah* (BDB478, KB 476)
3. Սեպտուագիտան (այսինքն՝ առաջին դարի եկեղեցու Աստվածաշունչը) երբայերեն այս հասկացությունները թարգմանում է Կոյնե Հունարեն տերմինների, որոնք կիրառվում են ՆԿ-ում (տես՝ ցածր Գ. կետը)
4. Հիմնական նշանակությունը կապված է զոհաբերության համակարգի հետ
 ա. *amōmos* (BDB 1071, տես՝ Ելից 29:1; Ղևտ. 1:3,10; 3:1,6; Թվոց 6:14)
 բ. *amiantos* և *aspilus* նաև ունեն հեթանոսական նշանակություն

Գ. Նոր Կտակարան

1. Օրինական հասկացությունը
 ա. Երբայերենում օրինական հեթանոսական իմաստը թարգմանվում է *amōmos* (BDB 1071, տես՝ Եփես. 5:27; Փիլ. 2:15; 1 Պետ. 1:19)
 բ. Հունարենում օրինական նշանակությունները (տես՝ 1 Կորնթ. 1:8; Կող. 1:22)
2. Զրիստոսն է անմեղ, անբիժ և անարատը (*amōmos*, տես՝ Եբր. 9:14; 1 Պետ. 1:19)
3. Զրիստոսի հետևորդները պետք է հետամուտ լինեն Նրան (*amōmos*, տես՝ Եփես. 1:4; 5:27; Փիլ. 2:15; Կող. 1:22; 2 Պետ. 3:14; Հուդա 1:24; Հայտն. 14:5)
4. Այս հասկացությունը նաև կիրառվում է եկեղեցու առաջնորդների համար
 ա. *aneglētos*, «առանց դատապարտության» (տես՝ 1 Տիմ. 3:10; Տիտոս 1:6-7)
 բ. *anepileptos*, «քննադատությունից վեր» կամ «առանց նախատիմի» (տես՝ 1 Տիմ. 3:2; 5:7; 6:14; Տիտոս 2:8)
5. «Անարատ» հասկացությունը (*amiantos*) կիրառվում է՝
 ա. Զրիստոսի համար (տես՝ Եբր. 7:26)
 բ. Զրիստոնյայի ժառանգության համար (տես՝ 1 Պետ. 1:4)
6. «Լիարժեքության» կամ «ամբողջականության» հասկացությունը (*holoklēria*) (տես՝ Գործք 3:16; 1 Թեսաղ. 5:23; Հակ. 1:4)
7. «Առանց մեղադրանքի», «անհանցանք անմեղություն» հասկացությունը փոխանցվում է *amemptos* տերմինի միջոցով (տես՝ Ղուկ. 1:6; Փիլ. 2:15; 3:6; 1 թեսաղ. 2:10; 3:13; 5:23)
8. «Մեղադրանքի ենթակա չլինելու» հասկացությունը փոխանցվում է *amōmētos* (տես՝ 2 Պետ. 3:14)
9. «Անբիժ» «անարատ» հասկացությունը հաճախ կիրառվում է այնպիսի հատվածներում, որտեղ կան վերը նշված տերմիններից որևէ մեկը նույնպես (տես՝ 1 Տիմ. 6:14; Հակ. 1:27; 1 Պետ. 1:19; 2 Պետ. 3:14)

Դ. Երբայերենում և հունարենում կիրառված բառերի քանակը, որոնք փոխանցում են այս հասկացության իմաստը, ցույց է տալիս դրա կարևորությունը: Աստված հոգացել է մեր կարիքը Զրիստոսի միջոցով և այժմ մեզ կոչ է անում Նրա նման լինելու:

Հավատացյալները պաշտոնապես, իրավաբանորեն՝ դատական կարգով, հռչակված են «ճիշտ», «արդար», «անմեղ» Զրիստոսի գործի շնորհիվ: Այժմ հավատացյալները պետք է գրավեն իրենց դիրքը: «Քայլենք լույսի մեջ, ինչպես Նա է լույսի մեջ» (տես՝ 1 Հովհ. 1:7): «Քայլենք մեր կոչմանն արժանի» (տես՝ Եփես. 4:1,17; 5:2,15): Հիսուսը վերականգնել է Աստծո պատկերը մեր մեջ: Մտերմիկ փոխհարաբերությունը այժմ հնարավոր է, սակայն հիշեք, որ Աստված ուզում է այնպիսի մարդիկ, որոնք այս կործանվող աշխարհում (այսինքն՝ ազգերի մեջ) կարտացոլեն Իր բնավորությունը, ինչպես Իր Որդին արեց: Մենք կանչված ենք սրբության (տես՝ Մատթ. 5:20,48; Եփես. 1:4; 1 Պետ. 1:13-16), Աստծո սրբությանը, ոչ միայն օրենքով, այլ նաև էրզիստենցիալ:

❖ «**Քրիստոսի օրվա համար**» Տես Հատուկ Թեմա. Քրիստոսի Վերադարձը նկարագրող ՆԿ-յան տերմիններ, Կող. 3:4-ում:

1:11 «լցված» Սա վաղակատար կրավորական դերբայ է: «Լեցունության» հասկացությունը կապված է Աստծո գործության, Սուրբ Հոգու հետ (տես՝ Եփես. 5:18): Նա է ստեղծում Քրիստոսի նմանությունը այն մարդկանց մեջ, ովքեր հավատում և համագործակցում են Նրա հետ, որը փրկության նպատակն է (տես՝ Հռոմ. 8:28-29, 2 Կորնթ. 3:18, Գաղ. 4:19):

NASB
NKJV
NRSV
TEV
NJB

«արդարության պտուղը»
«արդարության պտուղները»
«արդարության հունձքը»
«իրապես բարի հատկանիշները»
«ազնվության պտուղները»

Ուշադրություն դարձրեք «պտուղ» տերմինը եզակի է, ինչպես որ Գաղ. 5:22-ում, որտեղ Հոգու պտուղը սեր է: Այստեղ պտուղը արդարությունն է: «Արդարություն» տերմինը Պողոսի թղթում սովորաբար վերաբերում է հավատացյալի օրինական դիրքին՝ կարգավիճակին (դիրքային արդարացումը և սրբացումը, տես՝ Հատուկ Թեմա. Սրբացում, Եփես. 1:1-ում) Աստծո առջև (տես՝ Հռոմեացիների 4-8): Այստեղ, սակայն, այն արտահայտում է ներքին փրկության գործնական արդյունքը (անող սրբացումը, տես՝ Փիլ. 1:10, Հակոբոս 3:18): Տես Հատուկ Թեմա. Արդարություն, Եփես. 4:24-ում:

❖ «**Աստծո փառքի և փառաբանության համար**» (Տես՝ Մատթ. 5:16, Եփես. 1:6, 12, 14): Հավատացյալների կյանքերը պետք է պատվեն Աստծուն: Արդարացումը պետք է սրբացում ծնի: Չկա պտուղ, չկա՝ արմատ: Քրիստոսը թե՛ փրկում է մեզ և թե՛ վերականգնում է ընկած մարդկության մեջ Աստծո պատկերը: Հավատացյալները պետք է դրսևորեն՝ ցույց տան Աստծո ընտանիքի հատկանիշները: Տես Եփես. 1:6-ում «փառք» տերմինի վերաբերյալ գրառումը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻ 1:12-18
¹²Եղբայրներ, ուզում եմ հասկանաք, թե ինձ պատահած բաներն, ավելի շուտ ավետարանի առաջընթացին ծառայեցին, ¹³անգամ իմ կապանքները, որ Քրիստոսի համար են, հայտնի դարձան ամբողջ պալատում և մյուս բոլոր տեղերում, ¹⁴և Տիրոջով եղբայրներից շատերը, իմ կապանքներից քաջալերված, ավելի համարձակորեն սկսեցին Աստծո Խոսքը քարոզել՝ առանց երկյուղի: ¹⁵Ոմանք նախանձինգ և հակառակությունից դրդված, իսկ ոմանք էլ բարեհոգարությամբ են քարոզում Քրիստոսին. ¹⁶Թեև առաջինները հակառակությունից են քարոզում Քրիստոսին, և ոչ թե անկեղծությամբ, կարծելով, թե իմ կապանքներին տառապանք կավելացնեն, ¹⁷սակայն մյուսները՝ սիրուց, իմանալով, որ ես ավետարանի պաշտպանության համար եմ բանտարկված: ¹⁸Հետո ի՞նչ: Բոլոր դեպքերում, միտումնավոր, թե ճշմարտությամբ, Քրիստոսն է քարոզվում, և դրա համար ուրախանում եմ, այո՛, և կշարունակեմ ուրախանալ.

1:12 «ուզում եմ հասկանաք» Սա ակնարկում է, որ եկեղեցին Պողոսին որոշ հարցեր է ուղղել (ինչպես Կորնթոսի եկեղեցին, տես՝ 1 Կորնթ. 7:1,25, 8:1, 12:1, 16:1) Եպափրոդիտոսի միջոցով, որը բերել էր դրամական օգնություն իրեն, երբ գտնվում էր բանտում (տես՝ Փիլ. 2:25):

❖ «**թե ինձ պատահած բաներն**» Սա վերաբերում էր Պողոսի ձերբակալությանը, բանտարկությանը և դատին (դատերին): Ազգաբոս մարգարեն, կանխասել էր Պողոսի ձերբակալությունը և բանտարկությունը Գործք 21:10բ-ում: Այն փաստը, որ Պողոսը խոսելու էր հեթանոս թագավորների առաջ, հայտնվել էր Անանիային Գործք 9:15-ում: Աստված կատարել էր Իր կողմից հայտարարված

նպատակը Պողոսի ծառայության համար, սակայն մի այնպիսի ճանապարհով, որ Պողոսը չէր սպասում: Այս նույն ճշմարտությունը ակնհայտ է հավատացյալների կյանքում: Նրանք չեն վերահսկվում բախտի, հնարավորության կամ ճակատագրի միջոցով: Աստված իր փառքի ու պատվի համար հրաշալի կերպով օգտագործում է նույնիսկ բաներ, որոնք թվում է թե նսեմացուցիչ և բացասական են (տես՝ Փիլ. 1:20, Հռոմ. 8:28-29):

❖ «ավելի շուտ ավետարանի առաջընթացին ծառայեցին» «Առաջընթաց» տերմինը դարձյալ օգտագործվում է Փիլ. 1:25 և 1 Տիմ. 4:15-ում: Այն ունի հիմնականում երկու ստուգաբանական ծագում, որոնք հնարավոր է կապ ունեն Պողոսի կողմից կիրառվելու հետ՝

1. ռազմական տերմին էր՝ կոշտ տեղանքով վարժ զինվորականների կողմից արգելապատնեշները հեռացնելով գործի առաջխաղացման համար
2. կիրառվում էր հույն փիլիսոփաների (Ստոիկների) կողմից, որպես իմաստության դժվարին ճանապարհով անցնելու կոչ:

Չնայած որ ավետարանի առաջխաղացմանը, երբեմն դժվար է լինում: Հետաքրքիր է նշել, որ հասուն կարճանագրվում է առաջխաղացումը՝

1. Փիլ. 1:13-ում, որ Ավետարանը տարածվում էր Կայսերական Պահակախմբի և հենց Հռոմեական պալատի էլիտայի միջոցով:
2. Փիլ. 1:14-ում, որ Հռոմում գտնվող այլ քարոզիչներ համարձակություն էին ձեռք բերել քարոզելու Ավետարանը Պողոսի վերաբերմունքի և գործողությունների շնորհիվ, մինչ Պողոսն ինքը բանտարկված էր:

NASB
NKJV
NRSV
TEV
NJB

«պրետորական թիկնազոր»
«պալատական թիկնազոր»
«կայսերական թիկնազոր»
«ամբողջ պալատի թիկնազորը»
«պրետորիան»

KJV, NKJV և TEV թարգմանությունները տալիս են «պալատ» տերմինը, որն իհարկե հնարավոր է, քանի որ այդ բառը այսպես է կիրառվում Գործք 23:35-ում:

Այս համատեքստում այն վերաբերում է զինվորական կառույցի, ոչ թե պալատի՝ «և մնացած բոլորը» արտահայտության կիրառության պատշառով, որն ընստ երևույթին վերաբերում է մարդկանց: Այս մարդկանց ստույգ ինքնությունը անհայտ է, սակայն հավանաբար նրանք կայսերական ծառայողներ էին, օրինական խորհրդատուներ կամ պալատական սպասավորներ, որոնք ընդգրկված էին Պողոսի իրավաբանական դատավարություններում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ.ՊՐԵՏՈՐԻԱՆԱԿԱՆ ԹԻԿՆԱԶՈՐ SPECIAL TOPIC: PRAETORIAN GUARD

Սկզբնապես «պրետորիական» տերմինը վերաբերում էր հռոմեական գեներալի վրանին («*praetor*»), սակայն հռոմեական նվաճումների դարաշրջանից հետո այն սկսվեց կիրառվել վարչական նշանակությամբ՝ մատնանշելով քաղաքական, ռազմական վարչակազմի շտաբները կամ բնակատեղին (տես՝ Մատթ. 27:27, Հովհ. 18:28,33, 19:9, Գործք 23:35, Փիլ. 1:13):

Այդուհանդերձ առաջին դարի հռոմեական աշխարհում այն օգտագործվում էր սպայական կազմի համար, որոնք կազմում էին Կայսերական Թիկնազորը: Այս զինվորական էլիտար խումբը կազմվեց առաջին անգամ Օգոստինոսի կողմից (Ք.Ա.27թ), սակայն վերջնականապես կենտրոնացվեց Հռոմում Տիբերիոսի կողմից: Նրանք՝

1. բոլորը միևնույն աստիճանի էին՝ հարյուրապետներ
2. ստանում էին կրկնակի աշխատավարձ

3. ունեին հատուկ արտոնություններ (այսինքն՝ թոշակի էին անցնում 16 տարի անց, 25 տարվա փոխարեն)
4. այնքան հզորացան, որ նրանց ընտրությունը Կայսեր համար միշտ էլ պատվի էր արժանանում

Նախքան Կոստանտինի օրերը այս էլիտար, քաղաքական հզոր խումբը վերջնականապես լուծարված չէր:

1:14 Հունարեն այս «Տերում» արտահայտությունը կարող է հնչել «եղբայրներ» կամ «ավելի համարձակությամբ» տերմինների հետ, արտահայտելով այլ քարոզիչների վստահության համար հիմք, որոնք տեսել էին, թե ինչպես էր Պողոսը դիմակայում բանտարկությունը: Կարևոր է նշել, որ մարդու վարքագիծը, վերաբերմունքը և գործողությունները լարվածության և ճնշումների ընթացքում հաճախ մեծ քաջակերության աղբյուր են հանդիսանում այլ Քրիստոնյաների համար (տես՝ Հոբ, Երեմիա, Պողոս):

❖ **«սկսեցին Աստծո Խոսքը քարոզել՝ առանց երկյուղի»** «Աստծո Խոսք» արտահայտությունը ունի մի քանի հունարեն ձեռագրային տարբերակներ: Հնագույն հունարեն ունցիալ ձեռագրերը՝ α, Α, Β և Ρ տալիս են սեռական հոլովի «Աստծո խոսք» արտահայտությունը: Սակայն P⁴⁶, D^c և K ձեռագրերում այս սեռական հոլովի արտահայտությունը բաց թողնված է: UBS⁴ տալիս է այս բացթողմանը “B” գնահատական (գրեթե հաստատ): Այս բոլոր ձեռագրերում էլ նման բացթողումը հատվածի իմաստի վրա շատ փոքր ազդեցություն է թողնում:

1:15 Այս նախանձ Քրիստոնյա քարոզիչների ինքնությունը (տես՝ Փիլ. 1:15, 17, 18) մեկնաբանների մեջ մեծ տարածայնության առիթ եղավ: Թվում է թե ակնհայտ է Փիլ. 1:11-18-ից, որ նրանք իրապես քարոզում էին Հիսուսին, սակայն խղճուկ շարժառիթներով, ոչ հիմնականում ուղղված Հիսուսի քարոզչությանը և ավետարանի ուղերձին, այլ մասնավորապես Պողոսի անձին: Ոմանք պնդել են, որ այս մարդիկ հաստատված Քրիստոնյա առաջնորդներ են եղել (հրեա և հեթանոս), որոնք խավարեցին Պողոսի ինտելեկտով ու հոգևոր ներկայությամբ, երբ վերջինս ժամանեց Հռոմ: Հավանաբար նրանք Գաղատիայի Հուդաիստների պես էին, սակայն ավելի քիչ լարվածությամբ: Սակայն, Գաղատացիներին ուղղված նամակում Պողոսի սուր խոսքերի պատճառով (Գաղ. 3:2բ) անհավանական էր, որ այս տեքստը վերաբերեր սուտ վարդապետներին: Այստեղ այս մարդիկ պարզ քարոզիչներ էին՝ խղճուկ շարժառիթներով: Սա շատ ավելի նման է մերօրյա նախանձին, մրցակցությանը և պարտիզանությանը, որը հաճախ բնորոշ է Հիսուս Քրիստոսի եկեղեցուն՝ հակառակ 1 Կորնթ. 13, Հռոմ. 14, Գաղ. 5:26-ում պահանջվող սիրո և ընդունելության:

1:16
NASB, NKJV
NRSV
TEV
NJB

«ես նշանակված եմ»
«ես դրված եմ այստեղ . . . համար»
«Աստված տվել է ինձ . . . գործը»
«ես հաստատ եմ մնում»

«Նշանակված» (*keimai*) տերմինը ռազմական տերմին է հսկման ծառայության մեջ գտնվող զինվորի համար: Այն փոխաբերական իմաստով է կիրառվում այն մարդու համար, որը նշանակվել է ինչ-որ առաջադրանք կատարելու (տես՝ Ղուկ. 2:34): Պողոսի բանտարկությունը և դատը Հռոմում պատահական չէր, այլ Աստծո կանխորոշված ծրագիրն էր (տես՝ Գործք 9:15): Հիսուսի կյանքը նույնպես «նշանակված» էր (տես՝ Ղուկ. 22:22, Գործք 2:23, 3:18, 4:28): Այս աստվածաբանական աշխարհայացքով մեր կյանքերը դիտարկելն էլ շատ օգտակար է:

❖ **«ավետարանի պաշտպանության համար»** Սա միևնույն հունարեն տերմինն է (*apologia*), որը կիրառվում է Փիլ. 1:7-ում: Այս տերմինից մենք ունենք հայերեն /անգլերեն/ «ապոլոգետիկա»

շատագովություն» բառը, որը նշանակում է «օրինական պաշտպանություն»: Այս արտահայտությունը ակնարկում է կառավարական մակարդակի դատավարություններ (տես՝ Գործք 22:1), սակայն կարող է վերաբերել հրեական ժողովարաններում իր քարոզությանը նույնպես:

1:16-17 Հետաքրքիր է նշել, որ Տեքստուս Ռեպտուս /Textus Receptus/ Փիլ. 1:16 և 17 արտահայտությունները տեղերով փոխված են, որպեսզի համընկնեն 15 համարի հետ մտքի հերթականությանը: Հունարեն ձեռագրային նմանատիպ տարբերությունները (ինչպես և այլ շատ համարներում) չեն ազդում հասվածի նշանակության վրա:

1:17 «Եսասեր փառասիրությունից /հակառակությունից/» Այս տերմինը սկզբնապես նշանակում էր «վարձու բուրդ մանեթ», սակայն ժամանակի ընթացքում սկսեց կիրառվել արիստոկրատ ամբարտավանության իմաստով ի դեմս այն մարդկանց, որոնք պետք է ապրուստի համար աշխատելով գոյատևեին: Այն սկսվեց փոխաբերական իմաստով կիրառվել եսասեր փառամոլության համար: Պողոսի սրտի մեծությունը կարելի է տեսնել (Փիլ. 1:18) այն փաստի մեջ, որ նա ուրախանում էր, որ Քրիստոսը քարոզվում էր անգամ եթե քարոզիչն ուներ խղճուկ շարժառիթներ: Չորությունը Խոսքի մեջ է, ոչ թե քարոզչի:

1:18 Պողոսը հասկանում էր, որ ավետարանի պատգամը գերազանցում էր անձնական մրցակցություններից: Այս համարն ունի հսկայական ազդեցություն հարավսլավոնական բաժանումների հարցում, որոնք գտնվում են այսօրվա Եկեղեցում և թե ինչպիսի մոտեցում կարող են ցուցաբերել հավաստացյալները անձնապես և աստվածաբանորեն (տես՝ Հռոմեացիների 14 և 1 Կորնթացիների 8-10):

❖ «Ճշմարտությամբ» Տես՝ Հատուկ Թեմա. Ճշմարտությունը Պողոսի թղթերում, Եփես. 1:13-ում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻ 1:19-26
¹⁹որովհետև գիտեմ, որ դա ծառայելու է իմ փրկությանը՝ ձեր աղոթքով և Հիսուս Քրիստոսի Հոգու օգնությամբ, ²⁰իմ մեծ ակնկալության ու հույսի համաձայն, որ ոչ մի բանում ես չեմ ամաչելու, այլ կատարյալ համարձակությամբ, ինչպես միշտ, այնպես էլ հիմա Քրիստոսը պիտի մեծարվի իմ մարմնի մեջ՝ լինի իմ կյանքով, թե՛ իմ մահով: ²¹Որովհետև ինձ համար ապրելը Քրիստոս է, և մեռնելը՝ շահ: ²²Բայց եթե մարմնի մեջ ապրելը իմ գործին պտուղ է բերում, էլ չգիտեմ, թե ո՞րն ընտրեմ. ²³քանի որ նեղն եմ մնացել երկուսի միջև, ցանկանալով և՛ մեկնել, և՛ Քրիստոսի հետ լինել, որ գերադասելի է, ²⁴սակայն մարմնի մեջ մնալս ավելի հարկավոր է ձեզ համար: ²⁵Այս համոզումն ունենալով՝ ես գիտեմ, որ բոլորիդ հետ պիտի մնամ ու շարունակեմ՝ ձեր առաջընթացի և հավատի ուրախության համար, ²⁶որպեսզի ինձնով ձեր ուրախությունը առավել լինի Հիսուս Քրիստոսով, երբ վերստին գամ ձեզ մոտ:

1:19 «իմ փրկությանը /ազատությանը/» Բառացի այս տերմինը (*sōtēria*) նշանակում էր «փրկություն»: Պողոսը շատ հաճախ այս տերմինը կիրառում է, երբ խոսում է Քրիստոսում հոգևոր փրկության մասին: (Մի քանի օրինակներ՝ Հռոմ. 1:16, 11:14, 1 Կորնթ. 1:21, 7:6, 1 Տիմ. 4:16, 2 Տիմ. 2:10, 3:15, 4:18, Տիտոս 3:5): Այդուհանդերձ, այստեղ կիրառվում է ՀԿ-յան ֆիզիկական փրկության՝ ազատության իմաստով (տես՝ 2 Տիմ. 4:18, Հակոբոս 5:15): Այն հաճախ կիրառվում է այնպիսի համատեքստերում, որոնք կապ ունեն դատավարությունների հետ (տես՝ Մարկ. 13:11, Ղուկ. 12:11-12): Անգամ հնարավոր է, որ այստեղ ակնարկ է Սեպտուագիստայից (LXX) Հոր 13:16-ին, որտեղ Հորը ի վերջո Աստծուց ստանում է իր հատուցումը (տես՝ Հոր 42):

Պողոսը զգում էր, որ ազատվելու է (տես՝ Փիլ. 1:22-ի առաջին կարգի պայմանական նախադասությունը): Թվում է, թե Կողոսացիների և Եփեսացիների թղթերը գրվել են ավելի շուտ՝ Պողոսի հռոմեական բանտարկության ընթացքում և Փիլիպպեցիների թուղթը բանտարկության վերջում: Պողոսն ազատվեց և վարեց իր չորրորդ միսիոներական ճամփորդությունը, որը նկարագրվում է Հովվական Թղթերում (1 Տիմոթեոս, Տիտոս և 2 Տիմոթեոս) և ապա ըստ երևույթին կրկին ձերբակալվեց և գլխաստվեց Ներոնի մ. թ. 68թ-ի ինքնասպանությունից առաջ:

Պողոսի վստահությունը հիմնված է երկու տարրերի վրա՝ (1) Փիլիպպեցի Քրիստոնայաների աղոթքները և (2) Աստծո չոգու գորությունը: Հետաքրքիր է նշել, թե ինչքան հաճախ է Պողոսը խնդրում եկեղեցիներից, որ աղոթեն (տես՝ Հռոմ. 15:30, 2 Կորնթ. 1:11, Եփես. 6:18-19, Կող. 4:3, 1 Թեսաղ. 5:25): Գոյություն ունի ամենաբարեխոսական աղոթքի վերաբերյալ: Աստված սահմանափակել է Իրեն Իր գավալների աղոթքների հանդեպ (տես՝ Մատթ. 7:7-11, 18:19, 21:22, Դուկ. 11:9-13, Հովի. 14:13-14, 15:7, 16, 16:23-24, 1 Հովի. 3:22, 5:14-15): Ինչ-որ առումով անկեղծ, հարատև բարեխոսությունը ազատագրում է չոգու գորությունը ամենաանսովոր եղանակով՝ «մենք չունենք, բանի որ չենք խնդրում» (տես՝ Հակոբոս 4:2):

NASB	«պաշար»
NKJV	«մատակարարում»
NRSV, TEV	«օգնություն»
NJB	«աջակցություն»

Այս տերմինը սկզբնապես կիրառվել է հարուստ հովանավորի համար, որը աջակցում էր երգչախմբին: Ժամանակի ընթացքում այն սկսեց փոխաբերական իմաստով կիրառվել կատարելապես ապահովելու և առատ հոգածության համար:

❖ **«Հիսուս Քրիստոսի չոգու»** Ճատ հաճախ Սուրբ չոգին նկարագրվում է Հիսուսի հետ Իր փոխհարաբերության տերմիններով (տես՝ Հռոմ. 8:9, 1 Կորնթ. 15:45, 2 Կորնթ. 3:18, Գաղ. 4:6 և 1 Պետ. 1:11): Գ.Քեմբլ Մորգանը չոգուն անվանում է «Մեկ ուրիշ Հիսուս»: Սա լիարժեք կերպով համընկնում է չոգու այն նպատակին, որը կարելի է գտնել Հովի. 16:7-15-ում: Սուրբ չոգու առաջնային ծառայությունը մարդկանց համոզելն է այնպես, որ հայտնի նրանց Հիսուս Քրիստոսի անձի և գործերի մեջ պարփակվող ավետարանը, մկրտի նրանց Քրիստոսի մեջ, և ապա ձևավորի Քրիստոսին նրանց մեջ:

Պողոսի կողմից Հիսուսին և չոգուն իրար կապելու նպատակն էր ցույց տալ, որ Նոր դարաշրջանը հասել էր: «Չոգու Դարաշրջանն» էր: Չոգին է բերել արդարության Նոր Դարաշրջանը: Իսկ Նոր Դարաշրջանը նաև Մեսիական էր: Հիսուսը չոր կողմից Սուրբ չոգու Նոր Դարաշրջանի բացման մեխանիզմն էր: Տես՝ Հատուկ Թեմա. Հիսուսը և չոգին, Կող. 1:26-ում և Չոգու Անձ լինելը, Եփես. 1:14-ում:

1:20 «Իմ մեծ ակնկալության համաձայն» Այս տերմինը հնարավոր է հորինվել է Պողոսի կողմից: Այն նաև կիրառվում է Հռոմ. 8:19-ում: Այն փոխաբերություն է մեկի համար, որը երկարած՝ ձգած վզով նայում է ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի:

NASB	«որ ոչ մի բանում ես չեմ ամաչելու»
NKJV	«որ ոչինչում չեմ ամաչելու»
NRSV	«որ ոչ մի կերպ ես չեմ ամաչելու»
TEV	«որ երբեք չեմ ձախողելու իմ պարտականության մեջ»
NJB	«որ երբեք չեմ ընդունելու պարտություն»

Սա վերաբերում է Պողոսի իրեն առաջադրված գործի մեջ ունեցած պատասխանատվության գագաթնին, չնայած որ հասկանում էր դժվարություններն ու փորձությունները (տես՝ 1 Կորնթ. 4:1-29, 9:27):

NASB, NKJV, NRSV	«լրիվ համարձակությամբ»
TEV	«համարձակությամբ լի»
NJB	«կատարյալ անվախությամբ»

Այս հունարեն բառն ունի «խոսելու համարձակության» հիմնական նշանակությունը՝ (1) ավելի գերակա մեկի ներկայությամբ (Աստված, դատավոր, թագավոր, և այլն) կամ (2) լարված

իրավիճակներում (տես՝ Գործք 4:13,29,31, Եփես.3:12, 1 Տիմ.3:13, Եբր.10:9, 1 Հովհ.4:17): Սա Պողոսի կրկնվող աղոթքն էր (տես՝ Եփես.6:19, Կող.4:3): Տես՝ Հատուկ Թեմա. Համարձակություն (Parrhēsia), Կող.2:15-ում:

NASB	«ինչպես միշտ, այնպես էլ հիմա Քրիստոս պիտի մեծարվի իմ մարմնի մեջ»
NKJV	«ինչպես միշտ, այնպես էլ հիմա, Քրիստոսը պիտի մեծարվի իմ մարմնում»
NRSV	«Քրիստոս պետք է մեծարվի հիմա, ինչպես և միշտ, իմ մարմնում»
TEV	«իմ ամբողջ էությանը ես պատիվ կբերեմ Քրիստոսին»
NJB	«այնպես որ հիմա, ինչպես միշտ, Քրիստոսն է փառավորվելու իմ մարմնի մեջ»

Սա ապառնի կրավորական բայ է, որը ցույց է տալիս, որ Պողոսը չէր այն գլխավոր դերակատարը Աստծուն պատվելու մեջ, այլ որ Պողոսի միջոցով Քրիստոսն է մեծարվելու՝ եղբայրների աղոթքներով և Սուրբ Հոգու գործությամբ (Փիլ.1:19): Հետաքրքիր է, որ Պողոսն այս արտահայտությունն ավարտում է «մարմին» բառի հունարեն տերմինով: Հավատացյալները պատվելու են Աստծուն իրենց մարմիններով (տես՝ 1 Կորնթ.6:20) կամ նրանք ընդհանրապես չեն պատվելու Նրան: Հույների համար մարմինը չար էր: Պողոսի համար այն բարոյապես չեզոք էր, սակայն մարմինը հանդիսանում էր և հանդիսանում է պատերազմի դաշտ փորձության համար և Աստծուն պատվելու ու փառավորելու համար վայր:

❖ **«լինի իմ կյանքով, թե՛ իմ մահով»** Հավատացյալները պետք է մեծարեն Քրիստոսին, ոմանք իրենց մահով և ոմանք էլ՝ իրենց հավատարմության կյանքով (տես՝ Հռոմ.14:8, 2 Կորնթ.5:1-10, 1 Թեսաղ.5:20, Հայտն.13:14):

1:21 «ինձ համար ապրելը Քրիստոս է, և մեռնելը՝ շահ» «Ապրելը» ներկա ներգործական անորոշ է, մինչդեռ՝ «մեռնելը» անդեմ ներգործական անորոշ: Սա նշանակում է, որ ապրելու շարունակվող գործողությունը Քրիստոսն է (Հռոմ.12:1-2): Սա դժվար հասկանալի արտահայտություն է, սակայն երբ նայում ենք Պողոսի մյուս թղթերին, տեսնում ենք, որ սա նշանակում է, որ հավատացյալները մեռած են մեղքի համար, իրենց անձի համար, մեռած են օրենքի համար, սակայն կենդանի են Աստծո ծառայության համար (տես՝ Հռոմ.6:1-11, Կող.3:4, Գաղ.2:20, 5:24, 6:14): Սակայն, այս համատեքստում, այն վերաբերում է ֆիզիկական մահվանը: Պողոսը գտնվում էր իր կյանքի համար կարևոր դատավորության ընթացքի մեջ, սակայն իր կյանքը արդեն իսկ վերցվել էր՝ Քրիստոսի ձեռքով:

❖ **«մեռնելը՝ շահ»** Պողոսի համար մահը նշանակում էր կատարյալ հաղորդակցություն Աստծո հետ (տես՝ Փիլ.1:23): Սա չի ենթադրում, որ Պողոսին ընդհանրապես չէր մտահոգում մահը: Նա քննարկել էր իր վախերը և պաշտպանական միջոցառումները 2 Կորնթ.5:1-10-ում: Մեր բոլորի համար էլ մահվան մեջ առկա է վախի գործոնը, սակայն ավետարանը մեզ կարողություն է տալիս համարձակորեն դիմավորելու ֆիզիկական մահը և սուրբ Աստծուն: Մենք պետք է հասկանանք, այդուհանդերձ, որ «շահ» բառն այստեղ չի նշանակում անձնական շահ Պողոսի համար, այլ շահ ավետարանի համար (տես՝ Փիլ.1:12):

1:22 «եթե» Սա առաջին կարգի պայմանական նախադասություն է:

❖ **«մարմնի մեջ»** Տես Հատուկ Թեմա Կող.1:22:

❖ **«իմ գործին պատու է բերում»** Մա մեկնաբանվում է երկու կերպ՝ (1) ոմանք սա տեսնում են որպես հունձք և նրա գործի կուլմինացիա, որն արդեն իսկ սկսել էր (2) ուրիշներն էլ դիտարկում են սա որպես նոր գործի ցանկություն՝ փափագ: Վաղ եկեղեցում շատ ապացույցներ կան, որ Պողոսը բանտից ազատվեց և մի քանի ամիս միսիոներական գործունեության ծավալեց, մինչև որ կրկին ձերբակալվեց և գլխատվեց մ.թ.68թ-ին, որը համարվում է Ներոնի ինքնասպանության տարին:

Նրա ազատման ապացույցները հետևյալն են՝

1. «փրկություն» տերմինի կիրառությունը Փիլ. 1:19-ում
2. առաջին կարգի պայմանական նախադասությունը Փիլ. 1:22-ում
3. Հովվական Թղթերը չեն համընկնում Գործքի ժամանակագրության հետ
4. Հռոմի Պապ Կղենտը Կորնթացիներին ուղղված իր առաջին նամակում (մ.թ.95թ) մասնավորապես 5-րդ գլխում ասում է, որ Պողոսն ազատվեց բանտից և գնաց դեպի արևմուտքի սահմանները:
5. Մուրատորիան Պատառիկում արտահայտվում է Պողոսի նամակների ներածականում
6. արտահատվում է Եվսեբիոսի *Էկլեսիաստիկ Պատմություններում*, 2:22
7. արտահայտվում է Ոսկերեանի քարոզներում, որոնք նշում են նրա կյանքի վերջին գործունեությունները

❖ **«էլ չգիտեմ, թե ո՞րն ընտրեմ»** Այս տերմինը սովորաբար նշանակում է «հռչակել»: Պողոսը իրականում ընտրություն չունեի իր ապրելու և մեռնելու միջև, սակայն նա պնդում էր, որ Աստված ուներ այդ ընտրությունը: Այդուհանդերձ նա մտովի այս երկու տարբերակների միջև պայքարի մեջ էր՝ (1) մեկը իր համար շահավետ կլիներ, այսինքն՝ նահատակությունը կամ (2) իր ազատությունը շահավետ կլիներ եկեղեցու համար, քանի որ ավելի շատ ժամանակ կունենար քարոզելու, սովորեցնելու և քաջալերելու:

1:23 «նեղն եմ մնացել երկուսի միջև» *Sunechō* տերմինը նշանակում է «խիստ սեղմվել կամ միասին պահվել» (տես՝ Ղուկ. 12:50, 19:43) և ցույց է տալիս անձնական ուժեղ պայքար, որը զգում էր Պողոսը կապված իր ծառայության ընտրությունների հետ:

❖ **«ցանկանալով և՛ մեկնել»** «Ցանկանալ» տերմինը շատ ուժեղ հունարեն տերմին է, որը հաճախ թարգմանվում է «կիրք», սակայն այստեղ այն օգտագործվում է ուժեղ ցանկության դրական իմաստով:

«Մեկնել» տերմինը շատ հետաքրքիր հունարեն բառ է, որը վերաբերում էր իր խարսխից հանած՝ թուլացրած նավի կամ ռազմական ճամբարի, որը քանդվում և հեռացվում է (տես՝ 2 Տիմ. 4:6): 2 Կորնթ. 5:1,11-ում Պողոսի կողմից այս տերմինի կիրառության պատճառով հավանական է, որ այն վերաբերում է ֆիզիկական մահվանը:

❖ **«և Քրիստոսի հետ լինել»** Փարիսեցիները միշտ սպասում էին վերջին ժամանակվա հարությանը (տես՝ Հոր 14:14-15, 19:25-27, Դան.12:2): Մա սկնհայտ է ՆԿ-յան բազմաթիվ հատվածներից, որոնք վերաբերում են Երկրորդ Գալուստիին, Դատաստանին և հետմահու կյանքին: Այդուհանդերձ այս հատվածում ավանդական հրեական *Դժողքի* հասկացությանը ավելացված մի հասկացություն կա, որ երբ հավատացյալները մեռնում են, նրանք չեն մտնում մի անգիտակից քնի մեջ կամ իջնում կիսագիտակից պահման մի վայր, այլ մտնում են Տիրոջ ներկայության մեջ (տես՝ Մարկ. 12:26-27, Ղուկ. 16:19-31, 23:43, 2 Կորնթ. 5:8): Այս ոլորտում առկա է աստվածաշնչյան շատ անորոշություններ: Աստվածաշունչը կարծես թե սովորեցնում է միջանկյալ մի գիտակցություն, անմարմին վիճակ (տես՝ Կորնթ. 15:51-52, 1 Թեսաղ. 4:13, 17, Հայտն. 6:9, 20:4): Մահվան ժամանակ հավատացյալները Տիրոջ հետ են լինելու, սակայն սահմանափակ հաղորդակցությամբ և այս հաղորդակցությունը կատարյալ չի դառնալու մինչև Հարության Օրը (տես՝ 1 Հովհաննես 3:2):

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՐՏԵՂ ԵՆ ՄԵՌԵԼՆԵՐԸ (ՇԵՈՒ/ԴՃՈՂՔ, ԳԵՀԵՆ, ՏԱՐՏԱՐՈՍ)
SPECIAL TOPIC: WHERE ARE THE DEAD? (SHEOL/HADES, GEHENNA, TARTARUS)**

I. Հին Կտակարան

Ա. Բոլոր մարդիկ գնում են *Sheol* (համանման արմատներ գոյություն չունեն և ստուգաբանությունն անհայտ է, BDB 982, KB 1368), որը մահվան կամ գերեզմանի վերաբերյալ խոսելիս մի արտահայտվելու կերպ է, հիմնականում Իմաստասիրական Գրքերում և Եսայի մարգարեությունում: ՀԿ-ում այն ստվերոտ, գիտակից, սակայն ուրախությունից զուրկ կյանք է (տես՝ Հոբ 10:21-22; 38:17):

Բ. *Sheol* բնութագրվում է՝

1. կապված Աստծո դատաստանի հետ (կրակ), 2 Օր.32:22
2. դարպասներով բանտ, Հոբ 38:17; Սաղմ. 9:13; 107:18
3. մի երկիր, որտեղից չեն վերադառնում, Հոբ 7:9 (մահվան արքայերեն անունը)
4. խավարի երկիր՝ թագավորություն, Հոբ 10:21-22; 17:13; 18:18
5. լռության վայր, Սաղմ. 28:1; 31:17; 94:17; 115:17; Ես. 47:5
6. կապված պատժի հետ նույնիսկ նախքան Դատաստանի Օրը, Սաղմ. 18:4-5
7. կապված *Abaddon* (կործանման .տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԱԴԴՈՆ...ԱՊՈՒԼԻՒՆ) հետ, որտեղ Աստված նույնպես ներկա է, Հոբ 26:6; Սաղմ. 139:8; Ամոկա 9:2
8. կապված «Գուբի» (գերեզման) հետ, Սաղմ. 16:10; Ես. 14:15; Եզեկ. 31:15-17
9. ամբարիշտները ողջ-ողջ իջնում են *Sheol*, Թվոց 16:30,33; Հոբ 7:9; Սաղմ. 55:15
10. հաճախ մարմնավորվում է որպես մեծ երախ ուենցող կենդանի, Թվոց 16:30; Առ. 1:12; Եսայի 5:14; Ամբ. 2:5
11. այդ վայրի մարդիկ կոչվում են Ռեփայիմներ՝ *Repha'im* (այսինքն՝ «մեռյալների հոգիներ»), Հոբ 26:5; Առ. 2:18; 21:16; 26:14; Ես. 14:9-11
12. այնուհանդերձ ՅԱՀՎԵՆ ներկա է նույնիսկ այստեղ, Հոբ 26:6; Սաղմ. 139:8; Առ. 15:11

II. Նոր Կտակարան

Ա. Եբրայերենից *Sheol* թարգմանվում է հունարեն որպես *Hades* (աներևույթ աշխարհ)

Բ. *Hades* /դժոռք/ հատկանիշները (շատ նման է *Շեոլին*)՝

1. վերաբերում է մահվանը, Մատթ. 16:18
2. կապ ունի մահվան հետ, Հայտն. 1:18; 6:8; 20:13-14
3. հաճախ համանման է մշտական պատժատեղին (*Gehenna*), Մատթ. 11:23 (ՀԿ մեջբերում); Ղուկ. 10:15; 16:23-24
4. հաճախ համագոր է գերեզմանին, Ղուկ. 16:23

Գ. Հավանաբար բաժանված (ռաբբիներ)

1. արդար մասը կոչվում է դրախտ (իրականում երկնքի համար մեկ այլ բառ, տես՝ 2 Կորնթ. 12:4; Հայտն. 2:7), Ղուկ. 23:43
2. ամբարիշտ մասը կոչվում է *Tartarus*/տարտարոս, 2 Պետ. 2:4; որը հանդիսանում է չար հրեշտակների պահման վայրը (տես՝ Ծննդոց 6; 1 Ենովք): Այն համադրվում է *Abyss* հետ՝ Ղուկ. 8:31; Հռոմ. 10:7; Հայտ. 9:1-2,11; 11:7; 17:18; 20:1,3

Դ. *Gehenna* /գեհենն

1. Արտացոլում է ՀԿ-ի հետևյալ արտահայտությունը. «Հիննոմի որդիների հարթավայրը» (Երուսաղեմի հարավում): Դա այն տեղն էր, որտեղ փյունիկեցիների կրակի աստծուն՝ *Molech* (Մողոքը, BDB 574, KB 591) երկրպագում էին մանկան

գոհաբերությամբ (տես՝ 4 Թագ.16:3; 21:6; 2 Մնաց.28:3; 33:6), որն արգելված էր ըստ Ղևտ.18:21; 20:2-5:

2. Երեմիան փոխեց այն հեթանոսական պաշտամունքի վայրից ՅԱՀՎԵի դատաստանատեղի (տես՝ Երեմ.7:32; 19:6-7): Այն դարձավ կրակե, հավիտենական դատաստանի վայրը 1 Ենովք 90:26-27 և Սիր.1:103
3. Հիսուսի օրոք հրեաներն իրենց նախահայրերի հեթանոսական երկրպագության մեջ մանկան գոհաբերության մեջ մասնակցություն ունենալուց այնքան ահաբեկված էին, որ այս վայրը նրանք դարձրեցին Երուսաղեմի համար որպես աղբանոց: Հավիտենական դատաստանին վերաբերող Հիսուսի տված փոխաբերություններից շատերը ծագում են այս աղբավայրից (կրակ, ծուխ, որդեր, գարշահոտություն, տես՝ Մարկ.9:44,46): *Gehenna* (Գեհեն) տերմինը օգտագործվել է միայն Հիսուսի կողմից (բացառությամբ Հակ.3:6):
4. Հիսուսի կողմից *Gehenna* բառի կիրառությունը.
 - ա. կրակ, Մատթ.5:22; 18:9; Մարկ.9:43
 - բ. մշտապես, Մարկ.9:48 (Մատթ.25:46)
 - գ. կորստյան վայր (թե՛ հոգու և թե՛ մարմնի), Մատթ.10:28
 - դ. *Sheol*-ին համարժեք, Մատթ.5:29-30; 18:9
 - ե. ամբարշտին բնութագրում է որպես «դժողքի որդի» Մատթ.23:15
 - զ. դատավճռի վախճանը, Մատթ.23:33; Ղուկ.12:5
 - է. *Գեհենի* գաղափարը համարժեք է երկրորդ մահվանը (տես՝ Հայտն.2:11; 20:6,14) կամ կրակե լճին (տես՝ Մատթ.13:42,50; Հայտն.19:20; 20:10,14-15; 21:8). Հնարավոր է, որ կրակե լիճը դառնա մարդկանց (*Sheol*-ից) և չար հրեշտակների (*Tartarus /Supernusnu/*, 2 Պետ.2:4; Հուդա հ. 6 կամ անդունդը, տես՝ Ղուկ.8:31; Հայտն.9:1-11; 20:1,3) համար հավերժական բնակավայր:
 - ը. այն նախատեսված չէր մարդկանց համար, այլ Սատանայի և իր հրեշտակների, Մատթ.25:41

Ե. Հնարավոր է, քանի որ *Շեոլը*, *Դժողքը* և *Գեհենը* իրենց նշանակությամբ որոշ չափով համընկնում են, որ.

1. սկզբում բոլոր մարդիկ գնում էին *Շեոլ/Դժողք*
2. այնտեղ ունեցած իրենց փորձառությունը (լավ/վատ) սաստկանում է Դատաստանի Օրվանից հետո, սակայն ամբարիշտների վայրը նույնն է մնում (այդ իսկ պատճառով KJV տարբերակը *hades* (գերեզման) բառը թարգմանում է որպես *gehenna* (դժողք))
3. միակ ՆԿ-յան տեքստը, որը նշում է Դատաստանից առաջ տանջանքը Ղուկաս 16:19-31-ի առակն է (Ղազարոսը և հարուստը): *Sheol*-նկարագրվում է նաև ներկայիս համար մի պատժատեղի (տես՝ 2 Օր.32:22; Սաղմ.18:1-5): Ամեն դեպքում հնարավոր չէ առակի հիման վրա կառուցել վարդապետություն

III. Մահվան և հարության միջև ընկած միջանկյալ վիճակը

Ա. ՆԿ-ը չի սովորեցնում «հոգու անմահության» մասին, որը համարվում է հանդերձյալ կյանքի վերաբերյալ հնուց եկած մի քանի տեսակետներից մեկը:

1. մարդկանց հոգիները գոյություն ունեն իրենց ֆիզիկական կյանքից առաջ
2. մարդկանց հոգիները հավիտենական են ֆիզիկական մահվանից առաջ և հետո
3. հաճախ ֆիզիկական մարմինը դիտարկվում է որպես բանտ և մահը որպես ազատում՝ վերադառնալու նախաձեռնության վիճակին

Բ. ՆԿ-ը ակնարկում է մահվան և հարության միջև ընկած մարմնից հեռու՝ անջատ վիճակ

1. Հիսուսը խոսում է մարմնի և հոգու միջև եղած բաժանման մասին, Մատթ.10:28
2. Հնարավոր է Աբրահամը հիմա մարմին ունի, Մարկ.12:26-27; Ղուկ.16:23

3. Մովսեսը և Եղիան ունենին ֆիզիկական մարմիններ Հիսուսի այլակերպության ժամանակ, Մատթեոս 17
4. Պողոսը հայտարարում է, որ Երկրորդ Գալստյան ժամանակ Քրիստոսի հետ եղող հոգիները առաջինը կհագնեն իրենց նոր մարմինները, 1 Թեսաղ.4:13-18
5. Պողոսը հայտարարում է, որ հավատացյալները ստանում են իրենց նոր հոգևոր մարմինները Հարության Օրը, 1 Կորնթ.15:23,52
6. Պողոսը հայտարարում է, որ հավատացյալները չեն գնում *Hades* /Դժողք, այլ մահվան ժամանակ միանում են Հիսուսին, 2 Կորնթ.5:6,8; Փիլ.1:23: Հիսուսը հաղթեց մահին և արդարին Իր հետ տարավ երկինք, 1 Պետ.3:18-22:

IV. Երկինք

Ա. Այս տերմինը Աստվածաշնչում կիրառվում է երեք իմաստով.

1. երկրից վեր գտնվող մթնոլորտը, Ծննդ.1:1,8; Ես.42:5; 45:18
2. աստղազարդ երկինքը, Ծննդ.1:14; 2 Օր.10:14; Սաղմ.148:4; Եբր.4:14; 7:26
3. Աստծո գահատեղին, 2 Օր.10:14; 3 Թագ.8:27; Սաղմ.148:4; Եփես.4:10; Եբր.9:24 (երրորդ երկինքը, 2 Կորնթ. 12:2)

Բ. Աստվածաշունչը հանդերձյալ կյանքի մասին շատ բան չի հայտնում, հավանաբար նրա համար, որ անկում ապրած մարդկությունը ի գորու չէ, կամ հնարավոր չէ, որ հասկանա (տես՝ 1 Կորնթ.2:9)

Գ. Երկինքը թե՛ վայր է (տես՝ Հովհ.14:2-3) և թե՛ անձնավորություն (տես՝ 2 Կորնթ.5:6,8): Երկինքը կարող է լինել վերականգնված Եդեմի պարտեզը (Ծննդոց 1-2; Հայտնություն 21-22): Երկիրը մաքրվելու է և վերականգնվելու (տես՝ Գործք 3:21; Հռոմ.8:21; 2 Պետ.3:10): Աստծո պատկերը (Ծննդ.1:26-27) վերականգնված է Քրիստոսում: Այժմ կրկին հնարավոր է Եդեմի Պարտեզում տիրող մտերմիկ փոխհարաբերությունը:

Սակայն սա կարող է լինել փոխաբերական իմաստով (երկինքը որպես Հայտն.21:9-27-ի հսկայական, քառակուսի քաղաքը) և ոչ թե բառացի նշանակությամբ: 1 Կորնթացիների 15 գլուխը նկարագրում է ֆիզիկական և հոգևոր մարմինների տարբերությունը որպես հասուն բույսի սերմ: Կրկին, 1 Կորնթ.2:9 (մի մեջբերում Ես.64:4 և 65:17-ից) հրաշալի մի խոստում և հույս է: Ես գիտեմ, որ երբ տեսնենք Նրան, Նրա պես կլինենք (տես՝ 1 Հովհ.3:2):

V. Օգտակար աղբյուրներ.

Ա. William Hendriksen, *The Bible On the Life Hereafter* (Ուիլյամ Հենրիկսն, *Աստվածաշունչը Հանդերձյալ Կյանքի Վերաբերյալ*)

Բ. Maurice Rawlings, *Beyond Death's Door* (Մորիս Ռոլինգս, *Մահվան Դռնից Այն Կողմ*)

❖ «**որ գերադասելի է**» Սա երեք համեմատականների շարք է, որը ցույց է տալիս Հիսուսի հետ լինելու մտքից Պողոսի ոգևորությունը:

1:25 Սա ենթադրում է, որ Պողոսը ակնկալում էր, որ ազատվելու է:

❖ «**ձեր առաջընթացի և հավատի ուրախության համար**» Փիլ. 25-26-ը իր կազմությամբ հունարենում մի նախադասություն է: Եթե ճիշտ է, որ «առաջընթաց» տերմինը (տես՝ 1 Տիմ. 4:15) ենթադրում է դժվարին ճամփորդություն, ապա նշանակալի է, որ «ուրախություն» տերմինը, որը շատ հատկանշական է այս գրքին, կապված է Քրիստոնեական կյանքի դժվարության հետ: ՆԿ-ի այլ հատվածներից ակնհայտ է դառնում, որ Քրիստոնյային բնորոշ առանձնահատկություններից է ուրախությունը՝ ֆիզիկական խնդիրների և հալածանքների մեջ (տես՝ Մատթ. 5:10-12, Հռոմ. 5:3, 8:18, 1 Թեսաղ. 5:16, Հակ. 1:2-4, 1 Պետ. 4:12-16):

1:26
NASB
NKJV
NRSV
TEV
NJB

«իմ հանդեպ ունեցած ձեր հպարտ վստահությունը առատա-
նա Հիսուս Քրիստոսով»
«ձեր ուրախությունն իմ համար առավել լինի Հիսուս Քրիս-
տոսով»
«որպեսզի ես առատապես բաժնեկցեմ ձեր հպարտություն
ինձնով Քրիստոս Հիսուսով»
«Երբ կրկին ձեր հետ լինեմ, դուք ավելի շատ առիթ կունենաք
հպարտանալու ինձնով ձեր կյանքում՝ Քրիստոս Հիսուսի
հետ միաբանության մեջ»
«որպեսզի ձեր մեջ լինելու համար իմ վերադարձը լիովին ավե-
լացնի ձեր հպարտությունը իմ վրայով՝ Հիսուս Քրիստոսում»

Այս արտահայտությունն ունի երկու հավանական խնդիր /նախադասության մաս/ (1) Քրիստոսը և (2) Պողոսը: Արդյո՞ք նրանք ուրախանում էին Քրիստոսով և ավետարանով, թե՞ Պողոսի վերադարձով և իրենց մեջ ծառայելու հնարավորությամբ: Համատեքստը հավանություն է տալիս վերջինիս: Պողոսի ծառայությունը փառավորելու էր Քրիստոսին: Տես Հատուկ Թեմա. Առատություն (*Perisseō*), Եփես. 1:8-ում:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ 1:1-26 ՀԱՄԱՐՆԵՐԻ ԾՈՒՐՁ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ովքե՞ր են վերակացուներն ու սարկավագները: Ի՞նչ պատասխանատվություններ ունեին նրանք:
2. Ինչո՞ւ էր եկեղեցին այդքան թանկ Պողոսի համար:
3. Ինչո՞ւ է համար 6-ը այդքան կարևոր: Ի՞նչ կապ ունի այն 5 և 10 համարների հետ:
4. Թվարկե՛ք թե ի՞նչ էր աղոթում Պողոսը եկեղեցու համար:
5. Ինչպե՞ս կարող էր Պողոսի բանտարկությունը պատճառ լինել ավետարանի առաջխաղացման համար:
6. Ովքե՞ր էին այն Քրիստոնյա քարոզիչները, ովքեր քարոզում էին նախանձից, մրցակցու-
թյունից:
7. Ինչո՞ւ է համար 18-ը այդքան կարևոր այն հարցում, թե ինչպես ենք վերաբերվում այսօրվա հարանվանություններին:
8. Ինչո՞ւ է Սուրբ Հոգին կոչվում Հիսուս Քրիստոսի Հոգին: Ո՞րն է այս փոխանակման կարևորությունը:
9. Ի՞նչ նկատի ունի Պողոսը «ապրելը Քրիստոս է, մեռնելը՝ շահ» ասելով: Ինչպե՞ս է սա անդրադառնում քո ամենօրյա, Քրիստոնեական աշխարհայացքի վրա:
10. Ի՞նչ է տեղի ունենում Քրիստոնյայի հետ մեռնելիս:
11. Ինչպե՞ս են Քրիստոնեական փորձառության մեջ խնդիրներն ու ուրախությունը կապված իրար հետ:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻ 1:27-30

²⁷Միայն թե Քրիստոսի ավետարանին վայել ձևով քայլեցեք, որպեսզի երբ գամ՝ տեսնեմ, իսկ եթե հեռու լինեմ՝ լսեմ ձեր մասին, որ դուք կայուն՝ մեկ հոգով ու մեկ մտքով, միասնաբար պայքարում եք ավետարանի հավատի համար, ²⁸ առանց ձեզ դիմադրողներից որևէ վախ ունենալու, որ նրանց կորստյան ապացույցն է, իսկ ձեզ համար՝ փրկության . և սա Աստուծուց է, ²⁹ քանի որ Քրիստոսի համար ձեզ շնորհված է ո՛չ միայն Նրան հավատալը, այլ նաև Նրա համար չարչարվելը, ³⁰ նույն պայքարը մղելով, որ իմ մեջ տեսաք և հիմա լսում եք ինձնից:

1:27 «միայն թե ավետարանին վայել ձևով քայլեցեք» Փիլ. 1:27-30-ը հունարեն տեքստում մի երկար նախադասություն է: Սա ներկա չեզոք (դեպոնենտ) հրամայական է՝ հունարենի քաղաք բառի արմատով (*polis*, տես՝ Փիլ. 3:20, Գործք 23:1, Եփես. 2:19): Այն կարող է թարգմանվել «դուք պետք է շարունակեք ապրել որպես քաղաքացիներ» (տես՝ Փիլ. 3:20): Սա արտացոլվում է մի քանի անգլերեն թարգմանություններում՝

1. *Նոր Կտակարանի Բերքլի Տարբերակը* (Գերրիթ Վերքույլ) /*The Berkeley Version of the New Testament* (Gerrit Verkuyl)
2. *Նոր Կտակարանը . Ամերիկյան Թարգմանություն* (Էդգար Ջ. Գուդսփիդ) /*The New Testament: An American Translation* (Edgar J. Goodspeed)
3. *Ընդգծված Նոր Կտակարանը . Նոր Թարգմանություն* (Ջ. Բ. Ռոթերհեմ) /*The Emphasized New Testament: A New Translation* (J. B. Rotherham).

Սա պետք է որ արտացոլի Փիլիպպեի պատմական միջավայրը որպես հռոմեական գաղութ: Այն նաև անդրադառնում է աստվածաբանորեն, որ հավատացյալները երկու աշխարհների քաղաքացիներ են և երկուսում էլ ունեն պարտավորություններ: Պողոսի կողմից սովորաբար կիրառվող փոխաբերությունը Քրիստոնեական կյանքի համար «քայլել» բառն է: Առաջին Քրիստոնյաները սկզբում կոչվում էին «Ճանապարհը» (տես՝ Գործք 9:2, 18:25-26, 19:9,23, 22:4, 24:14, 22): Հավատացյալները պետք է ապրեն արժանի կյանքեր (տես՝ Եփես. 4:1,17, 5:2, 15, Կող. 1:10, 1 Թեսաղ.2:12):

❖ **«որպեսզի երբ գամ՝ տեսնեմ, իսկ եթե հեռու լինեմ»** Մեր Քրիստոնեական կյանքում հարատևելու մասին այս նույն ճշմարտությունը կարելի է գտնել Փիլ. 2:12-ում և Եփես. 6:6-ում, երբ Պողոսը հորդորում է Քրիստոնյա ծառաներին լինել ժրաջան անկախ այն հանգամանքից իրենց տերերը հսկում են, թե՛ ոչ: Աստված միշտ է ներկա:

❖ **«որ դուք կայուն եք /հաստատ եք կանգնած/ մեկ հոգով»** Սա ներկա ներգործական սահմանական է: Պողոսը հաճախ է կիրառում «հաստատ կանգներ» արտահայտությունը երկու նշանակություններից որևէ մեկով՝ (1) Քրիստոսի մեջ մեր ունեցած դիրքը (տես՝ Հռոմ. 5:2, 1 Կորնթ. 15:1) կամ (2) Քրիստոսակերպությունը պահպանելու կարիքը (տես՝ փիլ. 4:1, 1 Կորնթ. 15:1, 16:13, Գաղ. 5:1, Եփես. 6:11,13,14, 1 Թեսաղ. 3:8, 2 Թեսաղ. 2:15): Սա եկեղեցու միասնականության կոչ է (տես՝ Գործք 4:32, Եփես. 4:1-6):

❖ **«միասնաբար պայքարում եք»** Սա ներկա ներգործական դերբայ է: Այս *syn* բաղադրյալը կանմ (1) մարզական տերմին է՝ հունական խաղերում թիմային մասնակցության համար, կամ էլ (2) ռազմական տերմին: Անգլերենի “athlete” (ատլետ) բառը ստանում ենք հունարեն այս բառից (տես՝ Փիլ. 4:3, 2 Տիմ. 2:5): Քրիստոնեական կյանքը որպես հոգևոր պատերազմ քննարկվում է Եփես. 4:14, 6:10-20-ում:

❖ **«ավետարանի հավատի համար»** Անգլերենում առկա որոշիչ հոդը հավատք բառը դարձնում է «հավատքը»: Համատեքստը պահանջում է, որ սա օգտագործված լինի Քրիստոնեական ճշմարտությունների համար (տես՝ Եփես. 4:5, 1 Տիմ. 4:20, 2 Տիմ. 1:14 և Հուդա 3, 20):

Հավատացյալները շատ հարցեր են տալիս, որոնց Աստվածաշունչը չի անդրադառնում (ստեղծագործության ստույգ գործընթացը, Սատանայի ծագումը, հրեշտակների ծագումը, երկնքի և դժոխքի ստույգ էությունը, և այլն): Ամեն բան, որ հարկավոր է փրկության և Քրիստոնեական ճիշտ կյանք վարելու համար, հայտնված է: Մուրբ հետաքրքրասիրությունը չպետք է պահանջի ավելի, քան տրված է (հայտնություն):

1:28 «առանց ձեր դիմադրողներից որևէ վախ ունենալու» Սա ներկա կրավորական դերբայ է (անգլերենում), որը կիրառվում է նկարագրելու կենդանիների հրմշտոցը (տես՝ Գործք 18:9,10, 1 Կորնթ. 2:3): Դիմադրողները կարող էին լինել՝

1. տեղացի հրեաները, չնայած որ Փիլիպպեոսն որպես այդպիսին ժողովարան չկա նշված
2. ճանապարհորդ հերա դիմադրողները, ինչպես որ Գործք 17:13-ում է նշված, կամ Գաղատիայի եկեղեցիների Հուդաիստների պես (տես՝ Փիլ. 3:2-6)
3. տեղացի հեթանոսները (տես՝ Գործք 16:16-21)
4. տեղի պետական իշխանությունները (տես՝ Գործք 16:21-40)»

❖ **«որ նրանց կորստյան ապացույցն/նշանն է»** Հունարեն «նշան» տերմինը նշանակում էր ապացույց հիմնված փաստերի վրա (տես՝ Հռոմ. 3:25, 26, 2 Կորնթ. 8:24): «Կորուստ» բառը ռազմական փոխաբերություն էր, որը նշանակում էր «կորցնել», «գրոյացնել» կամ «ոչնչացնել»: Քրիստոնյաների անվախ վկայությունը և ապրելակերպը դիմադրողների դատաստանի և հավատացյալների փրկության համար վկաներ են:

❖ **«իսկ ձեզ»** Փիլ. 1:28 և 29-ում «ձեզ» բառը ընդգծված է: Ինչպիսի՛ հակադրություն կա հավատացյալների և անհավատների միջև:

❖ **«փրկության համար»** Այս տերմինը բավականին երկիմաստ է, ինչպես Փիլ. 1:19-ում: Այն կարող է կիրառվել (1) կատարյալ փրկության իմաստով կամ (2) ՀԿ-յան ֆիզիկական ազատագրման իմաստով (տես՝ Հակոբոս 5:15): Մուտ վարդապետների և արտաքին հավաճանքների համատեքստում դժվար է ընտրել այս երկու տարբերակների միջև:

❖ **«և սա Աստծուց է»** «Նշան» և «փրկություն» տերմինները Փիլ. 1:28-ում երկուսն էլ իզական սեռի են, մինչդեռ «սա/դա» բառը՝ չեզոք սեռ է: Հետևաբար, «սա» տերմինը հնարավոր է վերաբերում է այն համարձակությանը, որ Աստված է տալիս հավատացյալներին՝ դիմակայելու իրենց հակառակորդներին: Սա Եփես. 2:8,9-ի պես կազմություն է, որտեղ «այդ» բառը վերաբերում է ոչ թե «շնորհքին» կամ «հավատքին», որոնք նույնպես իզական սեռի են, այլ փրկության ամբողջ գործընթացին:

1:29 «քանի որ ձեզ է շնորհված» Սա անդեմ կրավորական սահմանական է՝ *charis* արմատից (տես՝ Փիլ. 2:9, Հռոմ. 8:32): Աստծո առատաձեռն պարգևները փրկության և Քրիստոնեական կյանքի համար բանալի են (տես՝ Փիլ. 1:28):

❖ **«ո՛չ միայն Նրան հավատալը, այլ նաև Նրա համար չարչարվելը»** Մրանք երկու ներկա անորոշ դերբայներ են, որոնք հատկանշում են այն, ինչ Աստված տվել է հավատացյալներին Քրիստոսի մեջ: Մեկը առնչվում է շարունակական հավատքին, իսկ մյուսը՝ շարունակական հասունությանը: Հավատացյալների համար դժվար է այս ժամանակակից արևմտյան մշակույթի մեջ քննարկել չարչարանքը: ՆԿ-ում հաճախ դա Քրիստոնեական կյանքի անբաժանելի մասն էր (տես՝ Գործք 14:22, Հռոմ. 8:17, 1 Թեսաղ. 3:3, 2 Տիմ. 3:12, 1 Պետ. 3:14, 4:12-16): Չարչարանքի մի քանի նպատակները հնարավոր են լինել՝

1. Քրիստոսի համար շահավետ էր (տես՝ Եբր. 2:10, 5:8), հետևաբար՝
2. շահավետ կարող է լինել նաև հավատացյալների համար (տես՝ Փիլ. 2:10, Հռոմ. 5:3, Հակոբոս 1:2-4, 1 Պետ. 1:6,7), և
3. բերում է ուրախ վստահություն Քրիստոսի մեջ հավատացյալների ունեցած տեղի համար (տես՝ Մատթ. 5:10-12, Գործք 5:41, Հակոբոս 1:2, 1 Պետ. 3:14, և 4:12-16):

1:30 «նույն պայքարը մղելով» Փիլիպպեցի հավատացյալները հալածանք էին կրում: «Պայքար» տերմինը, որը Պողոսը շատ հաճախ է կիրառում, կա՛մ մարզական, կա՛մ էլ ռազմական փոխաբերություն էր: Անգլերեն “agony” /տառապանք/ տերմինը ստացել ենք այս հունարեն բառից:

❖ **«որ իմ մեջ տեսար»** Մենք ինչ-որ բաներ ենք սովորում Փիլիպպեում Պողոսի հալածանքից, որ արձանագրված է Գործք 16:22-24 և 1 Թեսաղ. 2:2-ում: Պողոսը Քրիստոնեության օրինակ էր ծառայել նրանց և մեր համար:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Փիլ. 1:27-ում ի՞նչ է խնդրում Պողոսը, որ անեն հավատացյալները:
2. Ովքե՞ր են այն դիմադրողները, որոնց մասին նշվում է Փիլ. 1:28-ում:
3. Ինչպե՞ս են չարչարանքներն ու հալածանքները շահավետ հավատացյալների համար: